



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ՀՀ.
4-21

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՐՁ

ՅԱԼԵԼԵԱԼ ԵԿ ԲԱՐԵՓՈԽԵԱԼ

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ

ՊՈԼԻՍ

=

1881

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

№ 4

Ե-21

Ա. ԶԱ. Ա. ՅԱ. ԺՈՂՈՎՐԴ

34/

Հ 1958

Ե-2

340.13 / = 9154/

Խ - 19

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄՆԻԳՎԱԾ 1958

ՀԱՆԴԵՐՁ

ՅԱԻԵԼԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՓՈԽԵԱԼ

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ



Ա. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԸ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼԱԲ

Յ. ՆԵՐՍԵՍԻ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ԱՐՔԵՊԻԿՈՎՈՍԻ

~~9001080167~~

~~107147~~

~~44344~~

33820

ԿԱՆԱԿԵ ԱԴՐԱԿԱՑԻՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ



ԱՌԵՋԻՆ ԴԼՈՒԽ

Բացում ժողովին, եւ վասերացում ընտրոքանց .

Յօդ. 1n.— Կ. Պօլսի Պատրիարք Բարձրաշնորհ
Սրբազնը՝ իրեւ Նախագահ՝ 'զԱզգային ժողովը կը
բանայ մայիսի առաջին եօթնեկին մէջ :

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն մը իու
տայ ազգային գործոց նախընթաց տարւոյն վիճա-
կին վրայ, եւ ժողովին ուշադրութեանը կը յանձ-
նարարէ ատենական նոր շրջանն ըզբաղելու գլխա-
ւոր լանդիրները :

Ատենական շրջանը մարտի վերջերը կը լմննայ,
'յորում ժողովը կը փակվի, 'յորում սահմանադրա-
պէս լուծանելի երեսփոխանաց պաշտօնը կ'աւար-
տի, եթէ ժողովին մասնակի վերանորոգումը այն
տարւոյն հանդիպի ։

Նոր ընտրութիւնք՝ ժամանակին սկսելով ապրի-
լին կ'աւարտին :

Վարչութեան տարեկան համարատութեան ժա-
մակետը կը համնի :

Երբեւ նախապատրաստութիւն՝ զոր նախագահ Սրբազնը կը հոդայ, բացումէն առաջ պատրաստ պէտք է ըլլան

“ Ընտրութեանց տեղեկագիրները, որ առաջին նիստին օրակարգն է դիւանին կազմութեան հետ ։

Է՝ Վարչութեան իւրաքանչիւր ճիւղին տարեկան համարատուութիւնը, որ առաջին վիճաբանելի խնդիրն է դիւանաց կազմութենէն ետքը :

ՅՕԴ. Ֆ.— Բացման ճառէն անմիջապէս ետքը՝ նախագահ Սրբազնը կը հրաւերէ երեսփոխանաց երիցագոյններէն մէկը առժամեայ ատենապետ բազմիլ, եւ կրտսերագոյն մը՝ ատենաղ պրութեան պաշտօն վարել :

Այս առժամեայ դիւանին գործն է՝ վաւերացում ընտրութեանց, եւ կազմութիւն Ֆայր Դիւանին :

ՅՕԴ. Յ.— Ժողովը չը վաւերացնէր Պայն ընտրութիւնը որ ընտրեալին յանձնառութիւնն ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրօղ ժողովին կողմէն, եւ ընտրելիութեան սպայմաններն ապահովող ծանօթագիր՝ Պատրիարք Սրբազնին կողմէն :

Ընտրութեանց տեղեկագիրները՝ որ նախագահ Սրբազնին ուղղեալ են ընտրօղ ժողովներէն, ապահովութեան ծանօթագրով մը իւր Սրբազնութեան կողմէն դիւանին կ'աւանդվին :

Ատենաղ պիրը կ'ընթեռնու Պանոնք, եւ դիտողութիւններ՝ եթէ կամ՝ կ'ըլլան. Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օրինաւորութեանը վրայ, եւ Ատենապետը երեսփոխան կը հըռ-

չակէ այն անունները որոց իշխանութիւնը վաւերական դատված է :

Նախագահ Սրբազնը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ ունկնդրաց մէջ են, գալ տեղ առնուլ եւ բազմիլ : Եթէ չ'են, յատուկ նամակաւ կը ծանուցնէ իրենց ընտրութեան վաւերացումը եւ կը հրաւիրէ՝ զանոնք յաջորդ նիստին ժողովին աշխատութեանց մասնակցիլ :

Օրինաւորութեան թերութիւն ունեցօղ տեղեկագիրը Նախաձեռնութեան դիւանին կը յղվի, եւ վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ :

Անմիջապէս կը ձեռնարկվի Մ. Դիւանին կազմութեանը, եթէ ժամանակը ներէ եւ ժողովն ուղէ. Եթէ ոչ՝ ութ օրէն վերստին կը գումարվի նիստը ի ներկայութեան նորընտիր անդամոց, օրակարգ ունելով 1. Կազմութիւն Մ. Դիւանին, 2. Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց :

Բ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Մայր դիւանին

ՅՕԴ. 4. — Ժողովին դիւանը՝ որ եւ Մայր դիւան կ'ըսվի միս դիւաններուն նկատմամբ, կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու դերստենապետէ⁽¹⁾ եւ երեք ատենադպրէ. որոնք մէկ շըրջանի համար կ'ընտըրվին եւ վերընտըրելի են :

(1) Հըսկանք. — Դերստենապետները Դիւանը չ'են բազմիր այլ միայն բացակայութեան ատեն Ատենապետին փոխանորդելու համար :

ՅՕԴ. 5. — Ատենապետը առանձին կ'ընտրը զի քայլութեամբ : Խսկ երկու դերատենապեաները միասին կ'ընտրվին քազմանուն քըւէով (յօդ. 47), նոյնպէս եւ ատենագպիրք :

Ասոնք իրենց ըստացած քըւէից սուաւելութեան կարգովը՝ իրրեւ առաջին, երկրորդ, եւլ. կը նըկատվին :

Երկու դարձ քըւէարկութենէ ետքը, եւ տատանում պատահած ատեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Քըւէից հսւասարութիւն պատահած ատեն՝ ատենապետաց երիցագոյնն ընտրեալ է, եւ ատենադպրաց կրոսերագոյնը, եթէ վիճակ չը պահանջվի կոնէ երկու ձայնով. Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, առանց վէճի :

Երբ դիւանին մէջ հրաժարում պատահի (յօդ. 444), եթէ հրաժարօղը ատենապետն է, նոր ընտրութիւն կ'ըլլայ. բայց եթէ երկրորդն է հրաժարօղը, երրորդը երկրորդ կ'ըլլայ եւ նոր երրորդ մը կ'ընտրը փի ։ Խսկ եթէ ատենադպիրներէն մէկը հրաժարի, հետեւորդն անոր տեղ կ'անցնի եւ եշրորդ ատենագպ'ր մը կ'ընտրը վի:

ՅՕԴ. 6. — Ատենագրութեանց արձանադիրքէն զատ դիւանն ունի երեք տօմար՝ խնդրոց կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայութեան տօմար. Պորոնք առաջին ատենադպիրը կը բաշխէ իւր պաշտօնակցաց, հսկելով անոնց վրայ իրրեւ ընդհանուր ատենադպիր :

Մայր դիւանին կազմութենէն ետքը եթէ ժամանակը հետո եռ վերնալ, ու թօրէն վե-

րըստին գումարվելու պայմանաւ՝ Նախաքննիչ դիւ-
ւանաց կազմութիւնն ընելու համար, որ՝ իբրեւ ա-
տենական խնդիր՝ միշտ սախաղական է ժողովին
համար, որ չը կրնար գործի օկտիլ իւր դիւանաց
կազմութենէն առաջ :

Գ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց

ՅՕԴ. Շ.— Ժողովին մէկ մասը դիւաններու կը
բաժնվի, որոնք տարիէ տարի կը նորոգվին :

Ժողովը իր աշխատութեանց դիւրութեան եւ
արդիւնաւորութեանը համար՝ իր դիւաններուն յա-
տուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճաբանելի
խնդրոց նախապատրաստական քննութիւնը :

Ա. յս դիւանները՝ Ձեռնհաս կամ Նախաքննիչ դիւ-
աններ ալ կը կոչվին, որք են

Ա. Ձեռնհասութեան դիւան՝ կրօնական կամ խառն
նիւթոց քննութեանը յատկացեալ .

Բ. Դաստիարակութեան դիւան՝ կրթական կամ
դպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Ե. Կալուածոց դիւան՝ վանքի, հիւանդանոցի, կր-
տակաց եւ ո՞ր եւ է կալուածական խնդրոց քննու-
թեանը յատկացեալ .

Դ. Համարակալութեան դիւան՝ տարեկան պիւ-
ճին, հանգանակութեան, եւ ո՞ր եւ է ելմատական
խնդրոց քննութեանը յատկացեալ .

Է. Յարաբերութեանց դիւան՝ թաղական եւ դա-

ՅՕԴ. 5. — Ատենապետը տուանձին կ'ընտըրվի բացարձակ առաւելութեամբ : Խսկ երկու դերատենապեաները միասին կ'ընտըրվին բազմունուն քըւէով (յօդ. 47), նոյնպէս եւ ատենապահիրք :

Ասոնք իրենց ըստացած քըւէից սուաւելութեան կարգովը՝ իրրեւ առաջին, երկրորդ, եւլ. կը նըկատվին :

Երկու դարձ քըւէարկութենէ ետքը, եւ տատանում պատահած ատեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Քըւէից հսւասարութիւն պատահած ատեն՝ ատենապետաց երիցագոյնն ընտրեալ է, եւ ատենադպրաց կրոսերագոյնը, եթէ վիճակ չը պահանջվի կոնէ երկու ձայնով . Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, տուանց վէճի :

Երբ դիւանին մէջ հրաժարում պատահի (յօդ. 444), եթէ հրաժարօղը ատենապետն է, նոր ընտրութիւն կ'ըլլայ . բայց եթէ երկրորդն է հրաժարօղը, երբորդը երկրորդ կ'ըլլայ եւ նոր երրորդ մը կ'ընտըրվի : Խսկ եթէ ատենապահիրներէն մէկը հրաժարի, հետեւօրդն անոր տեղ կ'անցնի եւ եշրորդ ատենապահ'ը մը կ'ընտըրվի :

ՅՕԴ. 6. — Ատենապրութեանց արձանադիրքէն գատ դիւանն ունի երեք տօմար՝ խնդրոց կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայութեան տօմար . Պորտեք առաջին ատենապահիրը կը բաշխէ իւր պաշտօնակցաց, հսկելով անոնց վրայ իրբեւ ընդհանուր ատենապահիր :

Տայր դիւանին կազմութենէն ետքը եթէ ժա-

րըստին գումարվելու պայմանաւ՝ Նախաքննիչ դիւանաց կազմութիւնն ընելու համար, որ՝ իբրեւ ատենական խնդիր՝ միշտ ստիպօղական է ֆողովին համար, որ չը կրնար գործի սկսիլ իւր դիւանաց կազմութենէն առաջ :

Գ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց

ՅՕԴ. Շ.— Ֆողովին մէկ մասը դիւաններու կը բաժնվի, որոնք տարիէ տարի կը նորոգվին :

Ֆողովն իր աշխատութեանց դիւրութեան եւ արդիւնաւորութեանը համար՝ իր դիւաններուն յատուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճաբանելի խնդրոց Նախապատրաստական քննութիւնը :

Ա.յս դիւանները՝ Ձեռնհաս կամ Նախաքննիչ դիւաններ ալ կը կոչվին, որք են

Ա. Ձեռնհասութեան դիւան՝ կրօնական կամ խառն նիւթոց քննութեանը յատկացեալ .

Ե. Դաստիարակութեան դիւան՝ կրթական կամ դպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Է. Կալուածոց դիւան՝ վանքի, հիւանդանոցի, կրտակաց եւ ո՞ր եւ է կալուածական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Դ. Համարակալութեան դիւան՝ տարեկան պիւճին, հանգանակութեան, եւ ո՞ր եւ է ելմտական խնդրոց քննութեանը յատկացեալ .

Ե. Յարաբերութեանց դիւան՝ թաղական եւ դա-

առական խնդրոց եւ աղերսագրոց քննութեանը յատկացեալ .

շ. Խրանասութեան դիւան՝ հովական աթոռոց վերաբերեալ եւ վարչական խնդրոց քննութեանը յատկացեալ .

է. Նախաձեռնութեան դիւան՝ օրինական եւ կանոնական խնդրոց քննութեանը յատկացեալ .

ը. Խմբագրութեան դիւան՝ օրինական եւ կանոնական ծրագրաց կամ յօդուածոց զրական վերաքըննութեանը յատկացեալ :

Բաց առոնցմէ՝ Ժողովը ըստ հարկին եւ առժամեայ կերպով յատուկ մասնաժողովներ կը կարգէ՝ սուլորիաբար Ֆէն ցը Ղ անդամէ . զորօրինակ՝ Սահմանադրութեան կամ Կանոնադրութեան վերաքըննութեանը համար , դատապատճի մը համար , եւլորոց ընտրութիւնը դիւանաց ընտրութեան պէս կ'ըլլայ , իսկ պաշտօննին իրենց տեղեկագրին հետ կը վախճանի :

ՅՈՒ. 8. — Դիւանները (ինչպէս անունը կը ցուցնէ) երեքական անդամէ կը բաղկանան , եւ անդամոց ընտրութիւնը՝ իւրաքանչիւր դիւանի համար սրբագրելի ընդհանուր ցանկի մը վրայ կ'ըլլայ . զոր Մ. Դիւանը կը ներկայէ Ժողովին , եւ Ժողովը՝ ցանկը սրբագրելով՝ մէկ դարձ քըւէարկութեամբ կ'ընտրէ՝ զամենը համեմատական առաւելութեամբ միայն (¹) (յօդ. 47 է.) :

(¹) Հըտհանու . — Որքան լիւան կայ սյնքան հատված կայ մէկ ցանկի վրայ գծով զատված . խրաբանչիւր հատված երեք անուն կը պարունակէ : Մէջմէկ օրինակ այս ցանկին բարապանք կը

Դիւանի մը անդամը՝ ուրիշ դիւանի մ'ալ եւ մասնաժողովի մ'ալ անդամ կրնայ ըւլալ, բաց ի ժողովին Ատենապետէն :

Անձնիւր դիւան ինք կը կարգէ իր ատենապետն ու ատենադպիրը, եւ յանձնուած խնդիրը քննելէն ետքը՝ կ'որոշէ 'զիւր տեղեկաբերը :

Դիւանները կուտան եւ իրենց ատենապետաց առունները Մ. Դիւանին, որ կը հաղորդէ ժողովին՝ դիւաններու ատենապետաց ցանկը :

ՅՈՒ. 9.— Դիւաններն իրենց աշխատութեանց կարգին մէջ ժողովին օրակարգին պէտք է հետեւին, եւ իրենց յանձնեալ քննութեան արդիւնը կարելի եղածին չափ չուտ պէտք է հասցնեն ժողովին, մանաւանդ երբ ստիպօղութիւն կայ :

ՅՈՒ. 10.— Դիւան թէ մասնաժողով տեղեկագրով մը եւ տեղեկաբերի մը միջնորդութեամբ կը ներկայեն ժողովին իրենց աշխատութեան արդիւնը, որ տեղեկագրին վերջը եղբակայութեամբ կ'ամփոփի :

ՅՈՒ. 11.— Առաջարկութեան մը հեղինակը իրաւունք ունի ընթերակցելու խորհրդակից ձայնով՝ զայն առաջարկութիւնը քննող դիւանին կամ մասնաժողովին նիստերուն :

Եթէ քանի մը հեղինակներ են մի եւ նոյն առաջարկութեան, մէջերնէն մէկը՝ կ'որոշեն զիրենք ներկայացնող :

ՅՈՒ. 12.— Եթէ խնդրի մը վրայ տեղեկութիւն ցըւեն եւեսփոխանաց, որք ամեն մէկ հատվածը զատ զատ սրբագրելով և ընդհանուր ցանկը ծալելով քըւէտուփը կը ձգեն :

Հստանալու համար՝ հարկ ըլլայ, դիւաններն ուղղակի կը հազորդակցին Վարչութեան դիւաններուն հետ՝ իրենց ատենապետին, ատենադպրին կամ տեղեկաբերին միջնորդութեամբ :

Նոյնպէս Բարձրաշնորհ Սրբազնը՝ ժողովային գործի մը համար ըստ հարկին՝ դիւաններէն մէկը կամ մէկ քանին՝ կամ ատենապետները միայն ի խորհրդակցութիւն կը հրաւիրէ իր քով :

ՅՈՒ. 13.— Դիւանաց ատենապետները կրնան միանալ առժամապէս եւ ատենապետաց Դիւան կազմել՝ որ եւ Համագումար դիւան կ'ըսվի, ազգային խիստ կարեւոր կամ յարաբերական ծանր խնդրի մը նախաքննութեանը համար :

Ժողովը կ'որոշէ Համագումար դիւանի պէտքը, եւ Մ. Դիւանին Ատենապետը՝ զանի կը գումարէ իր նախագահութեամբ :

Ատենապետաց դիւանը պէտք է ըստ կանոնի՝ Պատրիարքի ընտրութեան, ամբաստանութեան եւ հրաժարման խնդրոց նախաքննութեանը համար (տե՛ս յօդ. 47,84,87) :

Համագումար դիւանին վարմունքը նոյն է որպէս միւս դիւաններունը . (տե՛ս վերոգրեալ յօդուածները) :

Դ ԳԼՈՒԽ

Ատենական կանոնք

Յօդ. 14. — Ազգային ժողովը նիստ կ'ընէ՝ քանի որ ունի օրակարգ՝ կանոնաւորապէս երկու շաբաթն անդամ մը , ուրբաթ օր , Դալաթիոյ ժողովարանը . ժամը 6 էն մինչեւ 10 . (տե՛ս բացառութիւնքը 6 եւ 53 յօդուածոց մէջ :

Նախագահ Սրբազնը կրնայ ըստ հարկին արտաքոյ կարգի ժողով գումարել ուրիշ օր մը :

Նախագահ Սրբազնին կողմէն երեսփոխանք ի ժողով կը կոչվին գոնէ երկ օր առաջ , օրագրաց միջոցով կամ յատուկ կոչնազրով , 'յորում յիշեալ պէտք է ըլլայ նիստին տեղը , որոշեալ ժամը եւ օրակարգը :

Երբ որ օրակարգն սպառի , նիստերը կը դադրին , բայց ժողովը բաց կը համարվի ըստ առաջին յօդուածին կանոնադրութեան :

Յօդ. 15 — Ատեանը կը բացվի ճիշդ որոշեալ ժամին , եւ նախընթաց ատենագրութիւնն ընդունելութեան կը դրվի՝ ի ներկայութեան ո'ր եւ է թիւ անդամոց :

Դիմողութիւն ունեցող բացակայ ատենաբանք իրաւունք չ'ունին բողոքելու :

Յօդ. 16. — Ատենապետը կը բանայ եւ կը փակէ զատեանը :

Իր պաշտօնն է՝ վիճաբանութիւններն ուղղել , ատենաբանից կարգով խօսք տալ , կանոնադրութեան

պահպանութեանը հսկել , եւ ժողովն ըստ կանոնի ղեկավարել :

Առաջին ատենապետին բացակայութեան ատեն՝ երկրորդին կը մնայ այս պաշտօնը , եւ երկրորդին բացակայութեանը՝ երրորդին :

ՅՕԴ. 17.— Ատենադպրաց պաշտօնն է՝ իրարու օդնականութեամբ ատենական գրութեանց հոգ տանիլ , եւ նիստի մ'ատենագրութիւնը ամփոփ ու ըստ կարի ճիշտ խմբագրեալ՝ հետեւեալ նիստէն գոնէ 24 ժամ առաջ տպեալ հասցնել երեսփոխանաց ամեն մէկուն : Այս հոգը գլխաւորապէս առաջին ատենադպրին կը պատկանի , միւսներն իրենց յանձնըված տօմարներով զբաղեալ (յօդ. 6) :

ՅՕԴ. 18.— Եթէ դիպուածով՝ ատենադրութիւնը չ'է կրցած ժամանակին ցըւիլ , ընթերցումը՝ յատենի կ'ըլլայ , եւ ատենապետ ու ատենադպիր կ'ըստորագրեն ընդունելութենէն ետքը : Տպեալներն ստորագրեալ են՝ յաջորդ նիստին մէջ ընդունվելու համար :

Ատենագրութիւնն ուրիշ բան չ'է քան նիստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշտ պատկերը : Դիտօղութիւն՝ անոր անճիշտ երեւցած կետերուն վրայ միայն կընայ ըլլալ : Դիտօղութեան առթիւ՝ անցեալէն թել մը բռնելով անկէ նոր խնդիր հանելը՝ խնդրէն շեղիլ է եւ անսերելի (յօդ. 24,25) :

Դիտօղութեանց կը պատասխանէ խմբագիր ատենադպիրը , եթէ հարկ կայ պատասխանելու . բայց թէ բողոքող եւ թէ պատասխանող մէկ անգամ պրնան խօսիլ :

Ատենագրութեան ընդունելու թիւնը ձեռամբարձով կ'ըլլայ :

ՅՕԴ. 19. — Ատենագրութեան ընդունելութեան ետքը՝ օրակարգին չ'անցած՝ Ատենապետը կը հաղորդէ ժողովին անոր վերաբերեալ թուղթերը, եւ ժողովը՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ յղումները կ'արտասանէ⁽¹⁾ :

Ժողովին մատուցեալո՛ր եւ է թուղթ՝ կամ նախագահին ուղղեալ կամ ուղղակի Ատենապետին՝ Մ. Դիւանին վրայ կ'աւանդվին :

ՅՕԴ. 20. — Ժողովէն ո՞չ ոք անդամ կրնայ խօսիլ՝ Ատենապետէն խօսք շը խնդրած ու չ'առած :

Ատենապետը՝ երբ իբր անդամ խօսիլ ուղէ, դերատենապետին կը թողու աթոռը, ինք ալ իր կարգին խօսք կը խնդրէ ու բեմը կ'ելնէ, եւ նոյն խնդրին համար ալ չը բազմիր ատենապետ :

ՅՕԴ. 21. Ատենաբանք նշանակել պէտք է տան Դիւանին՝ անուննին, ճառելու խնդիրնին, թեր կամ դէմ խօսելիքնին :

Խօսից կարգի տօմարակալը (կամ ուրիշ ատենապետիր մը) կը նշանակէ խօսք խնդրօղները ա-

(1) Հբանանք . — Ժողովին արտասանած յղումները՝ ուր ոք ըլլան՝ Ատենապետը կը հրամանէ սա բառերով. զորօրինակ՝

«Ժողովը առ իւր դիւան (այս անուն) ի նախադննութեան» . (Թշական) նիստին Ատենապետը (սարութբութեան) » :

Կամ՝ Աշխային ժողովը առ իւր Գործադէր է լիտանութեան :

Կամ՝ առ իւր Վարչութեան և ի անօրենութեան :

(Թշական և սարութբութեան) :

ուաջնութեան կարգով, թեր ու դէմ խօսօղաց շարքըն որոշելով :

Յ0Դ. 22. — Վիճաբանութեանց մէջ ատենաբանք փոխադարձ կարգով կը խօսին թեր ու դէմ. այսինքն թեր խօսօղի մը ետեւէն չը գար անմիջապէս ուրիշ թեր խօսօղ մ'ալ, այլ դէմ խօսօղ մը կու գայ. նոյնպէս եւ աննպաստ խօսօղի մը կը յաջորդէ խնդրին ի նպաստ խօսօղ մը. եւ այսպէս փոխասաց յաջորդութեամբ կը շարունակէ վիճաբանութիւնը :

Յ0Դ. 23. — Ատենաբանը պէտք է բեմն ելնէ ու անկէ խօսի, եթէ (անձնական տկարութեան մը պատճառով կամ խիստ կարճ բացատրութեան մը համար) Ատենապետը բացառութեամբ չը ներէ անոր իր տեղէն խօսելու :

Նախագահ Սրբազնը միայն իր աթոռէն կը խօսի, եւ երբ խնդրէ՝ խօսքն իրն է :

Յ0Դ. 24. — Ատենաբանը խնդրէն դուրս ելնելու չէ. եթէ շեղի, Ատենապետը՝ զանի ի հնդիր կը կոչէ :

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուլ այս ի խնդիր կոչման վրայ :

Յ0Դ. 25. — Երբ ատենաբան մը երկու անդամ ի խնդիր կոչվի մի եւ նոյն ճառին մէջ, ժողովը կրնայ՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ՝ արգիլել՝ զանի խօսքէ նոյն խնդրին վրայ նոյն նիստին մէջ : — Ժողովը կը յայտնէ՝ զիւր կամը ձեռամբարձով, առանց վէճի :

Յ0Դ. 26. — Նոյն խնդրին վրայ երկու անդա-

մէն աւելի չը խօսվիր . եւ խնդրողին Ատենապետը չը կրնար ներել առանց ժողովին հաճութեան . իբաց առեալ են առաջարկութեան մը հեղինակն ու աեղեկաբերը :

ՅՕԴ. 27. — Խօսքը չը զլացվիր անձնական դէպի մը համար խօսիլ ուզողէն (¹) , կամ կանոնադրական դիտողութեան մը համար :

ՅՕԴ. 28. — Ո՛ր եւ է ընդմիջում , ո՛ր եւ է անձնականութիւն , բեմական բարբառի անվայել ո՛ր եւ է բառ կամ բացադանչութիւն արգիլեալ է եւ աններելի :

Արգիլեալ է նոյնպէս Տէրութեան աշխարհավարութեան վրայ քննադատական ակնարկութիւնը :

ՅՕԴ. 29. — Տասն անդամոց խնդրանօք՝ որ համառօտ պատճառաբանեալ պէտք է Ատենապետին ձեռքը տրվի , ձեռամբարձով առանց վէճի ժողովը կ'որոշէ միթէ դոնփակ նստել կ'ուզէ (յօդ. 81,82):

ՅՕԴ. 30. — Ատեանը փակ յայտարարելէն առաջ Ատենապետը կը կարգադրէ՝ ժողովին խորհուրդն առնելով , իներկայութեան ո՛ր եւ է թիւի անդամոց , յաջորդ նիստին օրն ու օրակարգը , որ ատենապրութեան մէջ կարձանագրվի , եւ օրագիրք կը հրատարակեն :

(1) Զորօրինակ՝ խօսքի առաջնութեան համար , բըւէի սխալ մ'ուղղելու համար , անընդունելի բառի մը կամ թիւր մեկնված ի . մասսի մը սրբագրութեան համար , և լ: Սոյն պարտգայից մէջ՝ եթէ պատասխանելու տեղի կայ , որու որ անկ է անի միայն կը պատասխանէ . բայց թէ բողոքող թէ պատասխանող մէկ անդամ կընան խօսիլ :

Ե. ԳԼՈՒԽ

Քըւեարկութիւն, եւ որոշում.

ՅՕԴ. 31. — Նախավճիռ միշտ կրնայ առաջարկվիլ (1) :

ՅՕԴ. 32. — Վիճաբանութիւնն աւարտեալ է քնականապէս երբ խօսից կարգն սպառի եւ ատենաբանք խօսած ըլլան քանիցո անգամ որ կանոնադրութիւնը կը ներէ : Սակայն եթէ վիճաբանութեան ընթացքին մէջ շատ մը ձայներ քըւէ պահանջեն , Ատենապետը՝ մնացօղ ատենաբանից անունները յիշեցնելով ժողովին կամքը կը հարցնէ . Ժողովը կը սլատասխանէ ձեռամբարձով առանց վէճի :

(1) Բեմական լեզուի մէջ նախավճիռ կամ նախակարգ վճիռ կ'ըսվի՝ խնդրի մը որոշման տեղի ունենալ կամ մանաւանդ չ'ունենալ յայտնելը :

ՀՅԱԿԱՆՔ . — Ժողովը ժամավաճառ չ'ընելու համար նախավճիռ կ'առաջարկվի , զորորինակ՝ կրօնական կամ քաղաքական խնդրոց մէջ ձեռնհասութեան համար , սահմանադրական սկզբան մը համար , արդէն որոշեալ կէտի մը համար (յօդ. 75) . և կամ երբ վիճելի կետը գլխաւոր խնդրի մը հետ այն աստիճան կապակցութիւն ունի որ մէկը շը լուծվիր առանց միւսը յուզելու , և այն միւսը գաղուէ օր մը՝ անի ալ իր ատենին Ժողովը զբաղեցնելու . վերջապէս երբ որ և է անտեղութիւն մը կայ զոր պէտք է բացատրէ այդ վճիռն առաջարկողը , որում խօսը միշտ կը տրվի . և թեր ու դէմ խօսող . ները լովելին ետքը , խնդրի մը կրնայ առանց քննութենէ անցնելու մեջմվիլ կամ ետ ձղվիլ սոսկ նախակարգ վճռով :

ՅօԴ. ՅՅ. — Որոշման մասին՝ քըւէի եւ օրակարգի պահանջմունք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ, 'զորոյ վիճաբանութիւնն կրնան ընդհատել, այլ 'զատենաբանին խօսքը ո'չ եթէ խօսած ատեն յառնեն այդ պահանջմունք :

ՅօԴ. ՅԿ. — Վէճը փակեալ յայտարարելէն առաջ Ատենապետը միշտ կը հարցնէ ժողովին կարծիքը :

Եթէ փակման դէմ խօսք ուղիղի, մէկ ատենաբանի միայն կը տրվի :

Եթէ տարակոյս կայ ժողովին կարծեաց մէջ, երկրորդ փորձէն ետքը, վիճաբանութիւնը կը շարունակվի :

Փակումն արտասանվելէն ետքը՝ ալ խօսք չը տրվիր, միայն թէ խնդրին դրութեանը (⁽¹⁾) վրայ :

ՅօԴ. ՅՅ. — Բարեփոխութիւնք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ եւ անկէ առաջ քըւէի կը դրվին :

ՅօԴ. ՅՅ. — Օրինական կամ կանոնական ծրագիրք եւ առաջարկութիւնք յօդուած առ յօդուած քըւէի կը դրվին : Ամբողջին վրայ քըւէով կ'աւարտի միշտ որոշումը :

Ճղաւոր խնդիրներու մէջ բաժանումն իրաւունքէ երբոր խնդըրվի :

ՅօԴ. ՅՅ. — Ժողովը իր որոշման ենթարկեալ խնդրոց վրայ վճիռ կու տայ՝ ձեռամբարձով կամ ելունիստով (⁽¹⁾), յայտնի քըւէով, գաղտնի քըւէով:

(1) Այսինքն ո՞ւ բաւերով +ը-էէ ՛ԵՎԵԼէ+ը :

(2) Ելունիստ թէ ձեռամբարձ անկատիր կընայ գործածել Ատենապետը, բայց ընդհանրապէս՝ ձեռամբարձի առաջին տարակուսելի

ՅՈՒ. ՅԵ. — Զեռամբարձով որոշումն իրաւունք է ամեն խնդրոց համար, բաց այն կետերէն՝ զոր ներկայ կանոնադրութեան 40, 41 եւ 45 յօդուածք կը նախատեսեն իբրեւ բացառութիւն :

ՅՈՒ. ՅԻ. — Զեռամբարձով որոշումը կը կատարվի՝ թեր ու դէմ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով (փորձ ու հակափորձ), ՚զոր դիւանին անդամք կը համրեն ու կը հաստատեն :

Եթէ հաստատեն թէ տարակոյս կայ՝ փորձը կը կրկնըվի :

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուլ երկու փորձերու միջեւ, եւ ո՛չ իսկ երկրորդ փորձին ու քըւէարկութեան միջեւ :

ՅՈՒ. ՅՈ. — Յայտնի քըւէն իրաւունք է՝

1. Երկու տարակուսելի, փորձերէն ետքը,
2. Օրինական ծրագիրներու կամ առաջարկութեանց համար :

ՅՈՒ. Յ. ՅՈ. Յայտնի քըւէ կրնայ խնդըրվիլ ամեն նիւթի համար .

Ի բաց առեալ են սա կետերը . օրակարդի որոշում, ատենադրութեանց ընդունելութիւն, ընտրութեանց վաւերացում, հրաժարմանց ընդունելութիւն, առաջնութիւն կամ նախադասութիւն, յղում, օրաձգում, վիճաբանութեան փակում, եւ ստիպողութեան նկատառում :

ՅՈՒ. Յ. Յ. ՅՈ. — Յայտնի քըւէ կրնայ խնդըրվիլ թէ

փորձէն ետքը՝ ուր ձեռքերն համրելու դժարութիւն ծագած է, երկրորդ փորձը ելունիստով ընել աւելի որոշիչ համարված է :

ձեռամբարձ որոշումէ առաջ եւ թէ՛ առաջին տարակուսելի փորձէն ետքը :

Կրնայ նաեւ խնդրվիլ ձեռամբարձ որոշումէն ետքը, եթէ օրինական ծրագրի կամ առաջարկութեան մը վրայ է տրվելիք վճիռը :

ՅՕԴ. 43.— Յայտնի քըւէ խնդրումը գրով պէտք է ըլլայ՝ դոնէ Յ անդամէ ըստորագրեալ եւ Ատենապետին ձեռքը տրված :

Թէ՛ ըստորագրօղաց եւ թէ՛ թեր ու դէմ քըւէ-արկուաց անունները պէտք է ատենագրութեան մէջ անցնին, նոյնպէս եւ ձեռնպահից եւ բացակայից անունները :

ՅՕԴ. 44.— Յայտնի քըւէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով .

Ատենապետը կը հրաւիրէ երեսփոխանները որ տեղերնին նստին : Անձնիւր երեսփոխան երկու քըւէթուղթ ունի որոց վրայ իր անունը տպեալ է : Սպիտագոյն քըւէթուղթները ընդունելութիւն կը նշանակեն, կազուտագոյնները չընդունելութիւն : Բարապանք կը ներկայեն անձնիւր երեսփոխանի՝ զոր անուանէ կը կոչէ ներկայութեան տօմարակալ ատենադպիրը՝ քըւէտուփ մը որոյ մէջ կը ձգէ իր քըւէթուղթը :

Անուանց ցանկը սպառելէն ետքը անմիջապէս կրկին կը կոչէ ատենադպիրն այն անունները որք քըւէ չ'են տուած : Անուանական կոչման չը պատասխանողը բացակայ կը նշանակվի, յայտնած պատճառովը, եթէ ունի (տե՛ս յօդ. 107) :

Երբոր քըւէթուղթներն հաւաքված են, Ատենապետը փակեալ կը յայտարարէ ըզ քըւէարկութիւնը :

Քըւէտուփիներն անմիջապէս բեմին վրայ կը բերվին : Ատենադպիրք քըւէհամարը կ'ընեն , եւ Ատենապետը կը հոշակէ զարդիւնը . այսինքն՝ քանի՛ քըւէի վրայ , քանի՛ քըւէի դէմ , քանի՛ քըւէով ընդունվիլ կամ չընդունվիլը :

Եթէ 3 անդամ խնդրեն թէ քըւէարկութիւնը բեմին վրայ ըլլայ , ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի :

Յօն. 45.— Այն ամեն պարագայից մէջ ուր յայտնի քըւէ կրնայ կամ պարտ է ընդունվիլ , եթէ 5 անդամ գաղտնի քըւէ խնդրեն , պէտք է որ գաղտնի ըլլայ :

Գաղտնի քըւէն ալ յայտնի քըւէին պէս կը խընդըրվի (տես յօդ. 43) :

Խնդրանքն ըստորագրօղաց անունները ատենապրութեան մէջ կ'անցնին , նոյնպէս եւ ձեռնպահից ու բացակայից անունները :

Յօն. 46.— Գաղտնի քըւէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով .

Անձիւր երեափոխան կ'առնէ երկու գնտակ , մէկը ձերմակ՝ որ ընդունելութիւն կամ այս կը նըշանակէ . միւսը սեւ՝ որ չընդունելութիւն կամ ո՛չ կը նշանակէ : Անուանական կոչման կարգով անձիւր ոք կը ներկայանայ , բեմին վրայ դրված սափորի մը մէջ կը ձգէ իր քըւէն նշանակող գնտակը . իսկ միւս գնտակը որ նշանակութիւն չ'ունի կը տանի կը ձգէ ուրիշ սափորի մը մէջ՝ որ ատենադպրաց դիւանին վրայ դրված է :

Քըւէնին տալէն ետքը՝ ամեն մարդ կ'անցնի իր տեղը կը նստի :

Ատենադպիրք կողովի մը մէջ կը պարպեն բեմին վրայի սափորը . ամենուն ցուցնելու կերպով կը համրեն գնտակները , եւ ճերմակները սեւերէն կը զատեն (1) :

Գոնէ երկու ատենադպիր կը հաստատեն այս համարնքին արդիւնքը , զոր Ատենապետը կը հռչակէ :

ՅՈՒ 47.— Ժողովին մէջ ընտրութիւնք գաղտնի քըւէով կ'ըլլան , եւ քըւէհամարը չորս քննիչներու ձեռօք կը կատարվի որոնք վիճակով կը հանվին :

• Միանուն է քըւէն՝ երբոր մէկ քըւէով մէկ անուն կ'ուզվի ընտրել , եւ քըւէթուղթը մէկ անուն պարունակելու է :

Բազմանուն է քըւէն՝ երբոր մէկ քըւէով մէկէն աւելի անուն կ'ուզվի ընտրել , եւ քըւէթուղթը այնքան անուն պարունակելու է ո'քան որ կ'ուզվի ընտրել :

Բազմանուն քըւէթուղթները՝ եթէ ուզված թիւէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են . բայց միայն՝ առջիններէն ուզված թիւը կ'առնվի , ետքի աւելորդը չը համընվիր :

Է . Ժողովին մէջ ընտրութիւնները՝ Մ. Դիւանին անդամներէն զատ որ անցանկ կ'ընտըրվին թէ միւ անուն եւ թէ բազմանուն քըւէով (յօդ. 6) , ներկայեալ ցանկի մը վրայ կ'ըլլան , որ կամ զէղչէլ է կամ սընտրելու:

(1) Հըահանք . — Գնտակի պակութեան ատեն , առ հարկի մարթ է նաև թուղթի կտորներով կատարել այս գործօղութիւնը , անձիւր անդամ՝ դրացոյն շրցուցնելու ըզդուշութեամբ և ընթեռնելի կերպով իր այսն կամ ո'չը թուղթի կտորի մը վրայ զընլով : Այս ատեն երկու սափորի առ հարկ չը կայ :

Ք. Մրբագրելի ցանկը՝ այնքան անուն կը պառունակէ ո՛քան որ ընտրել կ'ուղվի, որոյ մէջ քըւէարկուք չ'ուզած անուննին կ'աւ ըեն տեղը ուղածնին կը գրեն :

Մէկ դարձ քըւէարկութեամբ համեմատական առաւելութիւնը միայն կը բաւէ :

Դ. Զեղչելի ցանկը՝ եթէ մէկ անուն ընտրել կ'ուղվի մէջէն՝ գոնէ եռապատիկ անուն պարունակելու է. եթէ մէկէն աւելի կ'ուղվի, ցանկը երկպատիկ անուամբ կը բաւէ : Նախ այս ցանկը քըւէի կը դրվի. Եւ յետոյ քըւէարկուք կը զեղչեն այս ցանկէն աւրելով չ'ուզած անուննին, բայց տեղը անուն չեն կրնար դնել :

Երկու դարձ քըւէարկութենէ ետքը՝ համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Զեղչելի ցանկը պէտք է կոչնագրին հետ հաղորդեալ ըլլայ երեսփոխանաց, որպէս զի ժամանակ ունենան ընտրելեաց վրայ պէտք եղած ծանօթութիւններն ըստանալու :

Ե. Դիւանաց եւ մասնաժողովոց ընտրութիւնը սրբագրելի ցանկի մը վրայ կ'ըլլայ՝ զոր Մ. Դիւանը կը ներկայէ եւ ժողովը կը սրբագրէ :

Ղ. Վարչութեան անդամոց ընտրութիւնը զեղչելի ցանկի վրայ կ'ըլլայ, զոր Համագումար դիւանը Պատրիարքին հետ խորհըրդակցութեամբ կը պատրաստէ եւ ժողովը կը զեղչէ⁽¹⁾ :

Է. Պատրիարքի ընտրութիւնը բացարձակ առաւելութեամբ կ'ըլլայ՝ զեղչելի ցանկի վրայ, զոր

(1) Կրօնականին համար տե՛ս Սահմանադրութեան մէջ իր յօդուածը:

Վարչութիւնը կը ներկայէ՝ Սահմանադրութեան պահանջած կրօնական ու քաղաքական պայմանաց ապահովութեան ծանօթագրով մը, եւ միանդամայն ընտրելեաց անցեալն ու արժանիքը պատճառաբանող համառօտ տեղեկագրով մը, 'զոր ատենապետաց դիւանը կը նախաքննէ (13) :

Այս դիւանն իր դիտօղութեամբ կ'եղրակայէ իր կարծիքը՝ կամ անսրբագիր ընդունելութեան ցանկին, կամ սոսկ փոփոխութեամբ արժանեաց կարգին, եւ կամ սրբագրութեան 'զոր կ'առաջարկէ : Ժողովն այդ առաջարկեալ փոփոխութիւն կամ սրբագրութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ ձեռամբարձով առանց վէճի, եւ յետոյ ըստ այնմ կը զեղչէ ցանկն իր քըւէով :

Քըւէից հաւասարութիւն պատահած ատեն՝ երիցագոյնն ընտրեալ է, եթէ վիճակ չը պահանջվի գոնէ երկրորդող ձայնով . Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ վիճակը կ'ընդունի⁹ :

Սոյն կանոնով կը քննէ Ժողովը պատրիարքական տեղապահութեան ընտրելեաց ցանկը, եթէ իրեն գայ :

Սոյն ճամբէն կ'անցնի Ժողովին մէջ եւ Կաթուղիկոսական ընտրելեաց ցանկը՝ ո՞ր կողմէ որ գայ, եւ սոյն օրինակ կը մասնակցի Աղդային Ժողովն այդ ընտրութեան :

Յօ՞ն. ԱՅ. — Քըւէի մասնակցօղաց բացարձակ առաւելութեամբը կը գոյանայ Ժողովին որոշումը :

Բարձրաշնորհ նախագահը քըւէի մասնակցելու պարտաւորեալ չ'է, եւ անուանական կոչում չ'ըլլար իրեն համար :

Ամեն քըւէարկութեանց վերջը՝ փակեալ յայտաբարելէն առաջ՝ Ատենապետը Ժողովին կողմէն կը հարցնէ Պատրիարք Սրբազանին միթէ ունի՞ քըւէ։ Իսկ երբոր քըւէհամարի արդիւնը թեր ու դէմ քըւէից հաւասարութիւն բերէ, եթէ Պատրիարք Սրբազանը քըւէ տուած է, այն քըւէին կողմը կը հակի որոշումը։ Եթէ չ'է տուած, յայնժամ Ատենապետը՝ յանուն Ժողովին կը խնդրէ Նորին Սրբազնութեան քըւէն որ կ'որոշէ զորոշումը։

Պատրիարք Սրբազանին բացակայութեան ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը։

ՅՕԴ. 49.— Ժողովին որոշմանց վաւերականութեանը համար՝ երեսփոխանաց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է, կամ պակասութեան ատեն՝ անոր որոշօղ ձայնից միաբանութիւնը։

Երկու աստիճան մեծամասնութիւն կ'ընդունվի, չընական եւ խսկական։

Օրինական մեծամասնութիւնն է՝ ամբողջ երեսփոխանութեան Սահմանադրութեամբ որոշված թիւն (¹) կէսէն մէկ աւելին (որ այսօր 71 է)։

Խսկական մեծամասնութիւնն է՝ անոր հաւանական թիւին կէսէն մէկ աւելին (որ այսօր 47 է)։ Եւ հաւանական թիւ կը նկատվի ամբողջ երեսփոխանութեան երկու երրորդը (²)։

(1) Ծանօթն. — Երեսփոխանաց այս ամբողջ թիւը գրեթէ երբէք և բնականապէս կարելի չ'է ձեռք բերել, պատճառք՝ ընտրութեանց կամ վաւերացմանց յապաղմունք, ճամբորդութիւնը, հիւանդութիւնք, հրաժարմունք, վախճանմունք եւլ։

(2) Միւր մէկ երրորդը գրեթէ միշտ բացակայ կամ անպատճառ

Այս երկու աստիճան մեծամասնութիւնք իրենց որոշօղ մասն կամ ձայնն ունին, որ իւրաքանչիւրին համար իւր բացարձակ առաւելութիւնն է. 71 ին որոշօղ ձայնն է 36. եւ 47 ին որոշօղ ձայնն է 24.

Զանդամոց ներկայութիւնը դիւանը կը հաստատէ ներկայութեան տօմարէն 'զոր երեսփոխանք կ'ըստորագրեն ժողովարան մտած ատեննին. եւ քըւէարկութեան ատեն դարձեալ կ'ըստուգէ միթէ ստորագրօղք իսկապէս ներկայ են եւ թէ նիստը լիովին բաւական է որոշման ձեռնարկելու ։ Եթէ նիստը լիովին բաւական չը գտնվի, ներկայ անդամք կ'որոշեն ձեռամբարձով առանց վէճի միթէ կուզբն որոշօղ ձայնից միաբանութիւնը՝ հաւանական կարծելով՝ փորձել, կամ թէ իսկոյն անբաւական յայտարարել ժողովը :

ՅՈՒ. 50.— Օրինական մեծամասնութեան ներկայութիւն կը բնտովի, կամ անոր որոշօղ ձայնից միաբանութիւն՝

1. Պատրիարքական ընտրութեան համար .
2. Պատրիարքական ամբաստանութեան դատական նիստին համար .

3. Սահմանադրական օրինաց վերջնական որոշման համար .

Եթէ առաջին նիստի մէջ չը գոյանայ օրինական մեծամասնութիւն, բայց որոշօղ ձայները միանան մէկ կողմ, որոշումը վաւերական է : Խակ եւ-

համարելի է վերոյիշեալ պատճառանօք : — Այս թիւերն ըստ հարկին կ'աւելնան կամ կը պակսին համեմատապէս, եթէ երեսփոխանաց համեմատական թիւն առելնայ կամ պակսի սահմանադրապէս :

թէ այդ ձայները չը միանան, նիստը անբաւական կը համարվի, եւ որոշումն իբրեւ չեղեալ՝ յաջորդ նիստին կը մնայ, ուր իսկական մեծամասնութեան ներկայութիւնը կը բաւէ կամ անոր որոշող ձայնից միաբանութիւնը :

ՅՈՒ. 51.— Իսկական մեծամասնութեան ներկայութիւն կը բնտըռվի, կամ անոր որոշող ձայնից միաբանութիւն՝

1. Այն խնդրոց համար որոնց համար օրինական մեծամասնութիւնն անդամ մը անբաւական գըտված է (յօդ. 50) :

2. Ամեն ընտրութեանց, եւ այն ամեն ազդային խնդրոց համար որք վիճաբանութեամբ լուծելի են :

Ի բաց առեալ են ատեանին սկիզբն ըլլալու ատենագրութեան ընդունելութիւնը եւ ատեանին վերջերն ըլլալու յաջորդ նիստի օրակարգին որոշումը (տե՛ս յօդ. 15,30) : Նոյնպէս ի բաց առեալ են այն անվէճ խնդիրներն ու կետերը որք ձեռամբարձով առանց վէճի որոշելի են, որոնք ներկայ կանոնագրութեան յօդուածոց մէջ իրենց տեղը յիշված են, կամ 41 յօդուածին մէջ իբրեւ բացառութիւն նշանակված : Այս խնդիրները՝ որք ուղղակի ազդային չ'են այլ սոսկ ատենական գործողութիւնք, կրնան որոշվիլ ի ներկայութեան ո՛ր եւ է թիւի անդամոց :

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ իսկական մեծամասնութիւն, բայց որոշող ձայները միաբանին, որոշումը վաւերական է : Իսկ եթէ չը միաբանին, նիստն անբաւական կը համարվի, եւ փորձեալ որոշումն՝ իբրեւ չ'եղեալ՝ յաջորդ նիստին կը

մնայ , ուր սոսկ որոշօղ մասին ներկայութիւնը միայն կը բաւէ . զի բացակայք ձեռնպահից կարգը կը սեպվին , չ'ունին իրաւունք բողոքելու , եւ իրաւունքնին ներկայից թողլով՝ ասոնց իրաւունքը բարդեալ կը նկատվի :

ՅՈՒ. 52. — Սոսկ որոշօղ մասին ներկայութեամբը նստեալ ատեանի մէջ՝ ո'չ օրակարգէն դուրս խնդիր ներելի է որոշել եւ ո'չ իսկ վիճաբանութիւնը փակել անկէ դուրս խնդրի մը վրայ , եթէ յուղվի :

Եթէ իսկական մեծամասնութեան որոշօղ մասին ներկայութիւնը չը գոյանայ , որոշումն անկարելի է զի վաւերականութեան հիմ չը մնար , եւ նիստը՝ իբրեւ բոլորովին անբաւական՝ կը վերնայ :

Եթէ մէկ ատենական շրջանի մէջ երկու անդամ տեղի ունենայ այս անակնկալ դէպը , անմիջապէս նախագահ Սրբազանը յատուկ կոչնագրով ի պարտականութիւն կը կոչէ բոլոր երեսփոխանները՝ յիշեցնելով իրենց կանոնագրութեան վերջին յօդուածը , որ կը գծէ նախագահին ընելիքը , եւ որ ամենայն իրաւամբ գործադրելի է , եթէ յաջորդ նիստին մէջ անձամբ չը պատասխանվի սոյն կոչնագրին:

ՅՈՒ. 53. — Ամեն անբաւական նիստի հետեւակալ նիստը ուժ օրէն գումարել՝ իրաւունք է եւ պարտիք :

Զ. ԳԼՈՒԽ

Խնդրոց կարգ , Օրակարգ , եւ Ստիպողութիւն .

ՅՈՒ. Ֆ4. — Ժողովին բացումէն սկսեալ՝ վիճաբանելի խնդրոց կարգը բնականապէս կուգայ եւ իրեն յատկացեալ տօմարին մէջ կ'արձանագրվի :

Երեսփոխանական տարեկան ընտրութեանց վաւերացումն ու մայր դիւանին կազմութիւնը՝ ժողովին առաջին նիստին աշխատանքն են (յօդ. 1) :

Դիւանաց կազմութիւնն ու Վարչութեան տարեկան համարատուութիւնքը՝ երկրորդ նիստին խընդիրներն են (յօդ. 1) :

Համարատուութեան կը յաջորդէ բնականապէս տարեկան պիւճէին խնդիրը , որոյ քննութիւնն ու սահմանումը հաւանօրէն երրորդ կամ չորրորդ նիստը կը գրաւեն :

Ասոնցմէ ետքը կու գան Նախադահական ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիրները , որք Վարչութեան կողմէն իբրեւ օրինաց ծրագիր կամ առաջարկութիւն կը ներկայվին , եւ 'զորս Ատենապետը՝ առաջնութեան կարգով՝ խնդրոց տօմարին մէջ արձանագրել կ'արտօնէ 'զատենագպիրը , Ժողովին հաւանութեամբ (1) :

(1) Հրահանժ. — Խնդրոց կարգի արձանագիրը տօմարը կանոնաւոր բռնված ըլլալու համար , ամեն մէկ խնդրի էջ մը տալու է և վերէն ի վար տօմարածել նշանակելու է՝ աւանդուած , յղուած , ըստիացաւնիւած , նկատաւուած , ճերժուած , օրայիշուած , սրոշուած ընդուանելունեւածք կամ զընդուանելունեւածք , հրամանուած . Ա սյս ամեն մէկ ատենական գործողութիւն՝ տեղի ունեցած օրէն թվականեալ :

Ո՞չ ոք կրնայ խնդրոց տօմարին մէջ խնդիր յաւելու կամ պակսեցնել առանց ժողովին հաւանութեանը :

Ատենապետը խնդրոց տօմարին հետեւելով կը կարգադրէ յաջորդ նիստին օրակարգը (յօդ. 30) որ մէկ նիստի մէջ վիճաբանելի կամ կարգը այն աւուր եկած խնդիր ըսել է, որ եւ կ'ըսվի պարզ ու անխառն օրակարգ :

ՅՕԴ. — Ո՞չ մէկ խնդիր կրնայ խառնվիլ պարզ օրակարգին մէջ, եթէ ստիպօղութիւնը նկատողութեան չ'առնու եւ չ'ընդունի ժողովը :

Ո՞չ մէկ օրակարգ կրնայ առաջարկվիլ եթէ պատճառաբանեալ չ'ըլլայ, խմբագրեալ եւ դիւանին աւանդեալ, 'զոր Ատենապետը կ'ընթեռնու ժողովին:

Պարզ ու անխառն օրակարգը՝ եթէ պահանջվի՝ առաջնութիւն ունի միշտ :

ՅՕԴ. 56.— Եթէ պարզ ու անխառն օրակարգն իբաց առնվի, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կուզէ նկատօղութեան առնուլ եւ դիւաններուն յղել պատճառաբանեալ օրակարգին քննութիւնը :

Եթէ դիւաններու յղումն որոշվի, տեղ կը ցուցվի խնդրոց կարգին մէջ, եւ ժողովը նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ ա'յնպէս կը վարվի որպէս կանոն է վարվիլ ըստիպօղական նիւթերու մէջ (տե՛ս յետագայ յօդուածները) :

ՅՕԴ. 57.— Օրինական խնդրոց կամ առաջարկութեան մը ներկայման ատեն՝ ստիպօղութիւն կը նայ խնդըրվիլ,

կրնայ խնդըրվիլ Վարչութեան կողմէն , հեղինաս կին կողմէն , ո՞ր եւ է երեսփոխանի կողմէն :

Յ0Դ. 58.— Ստիպօղութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաբանեալ պէտք է ըլլայ :

Ժողովն անվէճ կ'որոշէ՝ Ատենապետին հարցմանց վրայ՝ եթէ տեղի կայ ելք տալու ստիպօղութեան խնդրանքին :

Յ0Դ. 59.— Եթէ ստիպօղութիւնն յայտարարվի , ժողովին հարցվելէն ետքը դիւաններուն կը յդի (յօդ. 9) , եւ ըստ այնմ վիճաբանութեան օրը կ'որոշվի :

Նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ՝ ժողովն անմիջապէս վիճաբանութիւնը կը բանայ եւ պարզ ձեւով (այսինքն միակ քըւէարկութեամբ) կը տը-նօրինէ որոշումը :

Եթէ ստիպօղութիւնը չ'ընդունվի , օրինական խնդրոց համար՝ տես 66 յօդ , եւ պարզ խնդրոց համար՝ 62 եւ 64 յօդուածները :

Յ0Դ. 60.— Օրինական խնդրի մը կամ առաջարկութեան մը ստիպօղական բնութիւնը կրնայ ետ առնվիլ երեսփոխանի մը խնդրանքին վրայ՝ նախաքննիչ դիւանին տեղեկագրին աւանդումէն ետքը : Այս ետ առումը ալ չը կրնար խնդըրվիլ վիճաբանութեանց բացումէն ետքը :

Է. ԳԼՈՒԽ

Առաջարկութիւնք

ՅՕԴ. 61. — Երեսփոխանի մ'ըրած որ եւ է առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք է ըլլայ : Ատենապետին կը տրվի որ Փողովին հազորդելէն ետքը՝ նոյն խնդրին ձեռնհաս դիւանին նախաքննութեանը կը յանձնէ (յօդ. 9 եւ 10) :

Այս դիւանը հակիրճ տեղեկագիր մը կը բերէ, որոյ եղրակայութիւնն է կամ պարզապէս մերժում, կամ օրածգում, կամ նկատառում :

Սակայն, եթէ գիտնայ այս դիւանը թէ ուրիշ դիւան մը արդէն այնպիսի խնդրով մ'զբաղեալ է որ կապակցութիւն ունի այդ առաջարկութեան հետ, անդէն ու բերանացի կը խնդրէ Փողովէն որ այն դիւանին յղվի առաջարկութիւնը :

ՅՕԴ. 62. — Եթէ ձեռնհաս դիւանը պարզապէս մերժման կամ օրածգման եղրակայէ, Փողովը կ'անցնի իր օրակարգին : Եթէ նկատառման եղրակայէ, նախ 'զասի կ'որոշէ Փողովը : Եթէ նկատառումն ընդունի, կ'անցնէ 'զանի խնդրոց տօմարին մէջ ուր կըսպասէ իր օրակարգը . եւ ելք կու տայ առաջարկութեան՝ պարզ որոշման եղանակաւ, եթէ պարզ է առաջարկութիւնը :

ՅՕԴ. 63. — Առաջարկութեան մը հեղինակը՝ երբ վէճն անգամ բացված ըլլայ, կրնայ 'զանի միշտ ետառնուլ : Բայց եթէ ուրիշ երեսփոխան մը 'զանի բռնէ, վիճաբանութիւնը կը շարունակվի :

ված պէտք է ըլլայ նախաքննիչ դիւանին կամ
մասնաժողովին :

ՅօԴ. 69.— Եռեակ քըւէարկութեամբ բարդ ո-
րոշման տնօրինութիւնը պիւճէի խնդրոց եւ տե-
ղական օրինաց համար չ'է . ասոնք միակ քըւէար-
կութեամբ եւ պարզ որոշման եղանակաւ կը աը-
նօրինվին : Այլ սահմանադրական այն կետերուն
համար է որ ընդհանուր աղգին մէջ իրեւ օրէնք
պիտ՝ իշխեն . ինչպէս ընտրական օրէնք, հանգա-
նակութեան օրէնք, դաստիարակութեան օրէնք,
իրաւանց ու պարտեաց արդար սկզբունքէն բըխ-
եալ այն տրամադրութիւնք՝ որ կայսերական ընդ-
հանուր օրինաց համաձայն՝ ազգային ու արշութեան
ընթանալու շաւիղը կը գծեն եւ անհատից յարգն
ու պատկառանքը կը պահանջեն :

ՅօԴ. 70.— Այն օրինաց համար՝ որք ստիպօ-
ղութեան պատճառով պարզ որոշման եղանակին
ենթարկեալ են (յօդ. 59), բարձրաշնորհը՝ իրեւ
գործադիր իշխանութեան Պետ՝ իրաւունք ունի
երկրորդ որոշում մ'ալ խնդրելու 'զոր պատճառա-
բանեալ դիտօղութեամբ կը յայտնէ ժողովին :

ՅօԴ. 71.— Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ
մերժվի օրինական ծրագիր մը, երեք նիստէ ա-
ռաջ չը կրնար դարձեալ երեւիլ ժողովին օրա-
կարգին մէջ :

ՅօԴ. 72.— Ժողովին որոշմանց արդիւնքը Ա-
տենապետը կը հռչակէ սա բառերով՝

« Աշխային ժողովն ընդունեց » ,

կամ « Աշխային ժողովը ընդունեց » :

ՅՕԴ. Շ3. — Աղջային ժողովին վերջնական վը-
ճիոր նոյն ժամէն գործադրելի է :

Ատենապետը՝ ժողովին կամքն առնելէն ետքը՝
յանուն ժողովին ըստորադրելով կը հրամանէ վըճ-
ռադիրը, նիստին օրէն թվականնեալ, 'զոր եւ ա-
տենադպիր մը կ'ըստորագրէ :

Վճռագիրը Ատենապետին ձեռօք Բարձրաշնորհ
Սրբազնին կը առվի, 'զոր ինքն ալ ըստորագրե-
լով՝ նախագահական հրամանմամբ գործագրութիւնը
կ'ապահովի :

Օրինակը Պատրիարքարանի դիւանին մէջ արձա-
նագրվելով օրինաց գիւղին մէջ, վճռագիրը կը
պահպի ազգային ժանգարանին մէջ :

Ասկէ ուժ օրէն՝ Բարձրաշնորհ Սրբազնը պատ-
րիարքական կոնդակաւ կը ծանուցնէ Առաջնորդաց
'զազգային որոշումը, ի հրահանդ ժողովոց եւ
խորհրդոց :

ՅՕԴ. Շ4. — Եթէ հաստատված օրինաց մէջ սահ-
մանադրական այնպիսի կետեր կան, որ Բ. Դրան
վաւերացմանը կը կարօտին, այնպիսեաց համար՝
Բարձրաշնորհ Սրբազնը՝ կամ պատասխանատուու-
թիւնը յանձն կ'առնու իբրեւ միջնորդ յարաբերու-
թեանց Աղջին եւ Տէրութեան, եւ գործագրու-
թիւնը կը հրամանէ պատրիարքական իշխանու-
թեամբ, սպասելով 'զայդ վաւերացումը . կամ՝
բացառութիւն կը լսնդրէ ժողովէն, փութացնել
խոստանալով 'զայդ վաւերացումը :

Ո՞րն եւ ըլլայ իր որոշումը՝ Բարձրաշնորհը կը
յայտնէ 'զանի ժողովին գոնէ յաջորդ նիստին մէջ :

ՅՕԴ. Շ5. — Ժողովը իր որոշումէն չը կրնաք:

դառնալ կամ 'զանի փոփոխել, եթէ որոշեալ խնդրին հեղինակին կողմէն, Վարչութեան կամ Պատրիարքին կողմէն՝ գործադրութեան անտեղութիւն պատճառելով ըստիպօղութիւն չը խնդըրվի, որոշումէն գոնէ երեք ամիս ետքը. (տես ըստիպօղութեան յօդուածները) :

Եթէ ըստիպօղութիւնը մերժվի, արդէն որոշեալ խնդիրը մէլ մ'ալ չը կրնար ներկայվիլ նոյն ատենական շրջանին մէջ :

L. ԳԼՈՒԽ

ԲԵՄԱԿԱՆ յարաբերութիւնք Ժողովին.

ՅՕԴ. Ֆ. — Ժողովին ուղղակի եւ ներքին յարաբերութիւնքը իւր Գործադիր իշխանութեան եւ իւր Վարչութեան հետ են, որոյ անդամք՝ իրենց վերապահեալ նստարանին վրայ բազմած՝ Ժողովին մէջ ձայն ունին, բայց ոչ քըւէ եթէ երեսփոխան չ'են : — Նոյնպէս եւ իրենց համարատուութեան խնդրին մէջ ձայն ունին բայց քըւէ ոչ՝ թէեւ երեսփոխան :

Ժողովին դիւանը առանց թուղթի գործ ոչ կ'ընդունի Վարչութենէն, ոչ կը յղէ Վարչութեան⁽¹⁾ :

(1) Հրահանժ. — Վարչութիւնը չը կրնար և չունի իրաւասութիւն խնդիր յդէւ Ժողովին ի քննութիւն ու տարտամ կերպով կարծիք հարենել. զի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ, և Ժողովը տեղեկութիւն տալու տեղ չ'ունի. իրմէ վեր մարմին չը կայ պաշտօնական : Առ քննութեանց ու վէճերուն նստարակը՝ միայն վճռի մը

Յօդ. Շ Յ.— Վարչութեան անդամք՝ անձիւր իր մասին մէջ առանձին՝ իբրեւ պաշտօնեայ ժողովին՝ սլատասխանատու են անոր, եւ Գործադիր իշխանութեան Պետը՝ ընդհանուր պատասխանատու, ըստ Սահմանադրութեան :

Այս պատասխանատուութենէն ընդհանուր կերպով կը զերծվի Սահմանադրութեան պատուիրած տարեկան համարատուութեամբ :

Սահմանադրութեան պատուիրած համարատուութիւնը՝ չ'իմանար եղած անցած դէզ մը մասնաւոր գործօղութեանց ցանկը, այլ տեւական եւ ընդհանուր վերակերպութիւնները, եղծմանց ու անկանոնութեանց առջեւն առնելու համար նոր հաստատված օրէնքն ու կանոնները, աղքային գործոց անձիւր ճիւղին իր մասին մէջ ինչ քայլ առած յառաջադէմ եւ որ աստիճան բարգաւաճեալ ըլլալը. վերջապէս չ'իմանար պաշտօնէին պաշտօն վարած ըլլալը գիտնալ, այլ այն պաշտօնին պարսականութիւնը կատարած կամ որ աստիճան կառարել կրցածը կ'սպասէ իմանալ : Քանզի սլաշտօն եւ սլարտականութիւն մի եւ նոյն բան չ'իմանար և ահմանադրութիւնը :

Համարատուութեամբ հասկցածն այն է Սահմանադրութեան, ինչ որ Վարչութեան իւրաքան-

հասնիլ է : Իրեն եկած թուղթերը՝ իր գիւանին վրայ աւանդեալ՝ զծիու կ'ըսպասն և ո՛չ տեղեկագիր :

Վարչութեան ընելիքը խնդրանք մըն է կամ առաջարկութիւն, որը համար ըստիալութիւն կրնայ խնդրել :

Ստորնագոյն զիւանէ մը պաշտօնական թուղթ չը յդվիր բարձրագոյնին այլ կը մատուցվի. ինչպէս բարձրագոյնէն չը մատուցվիր ստորնագոյնին այլ կը յդվի :

շիւր մասին համար՝ ոչ իբրեւ պաշտօն այլ իբրեւ պարտականութիւն գծած է իր յօդուածոց մէջ՝ ժամանակին համար պահանջելու նախատեսութեամբ :

Սոյն աչօք կը քննեն դիւանները, սոյն աչօք կը դատէ ժողովն ըզկարչութեան համարատութիւնը :

Եթէ ժամանակին չ'աւանդվին այդ համարատութիւնք Մ. Դիւանին վրայ, հանդերձ ազգային ելումտից տարեկան պիւճէով, պատասխանատու կը մնան Վարչութեան անդամք եւ գլխաւորապէս Գործադիր իշխանութեան Պետը, որում այս մասին հարցում կ'ուզվի Դիւանէն (յօդ. 1) :

Յ. Տ. 78. — Վարչութեան իւրաքանչիւր մասին տարեկան համարատութիւնքը՝ ատենական շըրջանին երկրորդ նիստին մէջ՝ տպեալ կ'աւանդվին ժողովին դիւանին վրայ (յօդ. 1 եւ 6) :

Ատենապետը՝ զանոնք դիւաններուն կը յդէ իբրեւ ըստիպօղ խնդիր [յօդ. 9, 10, 11] ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի :

Դիւաններէն տեղեկագիր քանի որ հասնի, տեղեկաբերը կ'ընթեռնու եւ կաւանդէ Մ. Դիւանին Ատենապետը կ'առաջարկէ եւ ժողովը կորոշէ իւրաքանչիւրին վիճաբանութեան օրը :

Յ. Տ. 79. — Համարատութեանց քննութեան արդեամբ ժողովը կամ կը գովէ կամ կը պարսաւէ Վարչութեան ընթացքը, եւ իր դատավճիոը գաղտնի քըւէով կը յայտնէ :

Համարատութեան չընդունելութիւնը՝ անվրսատահութիւն կ'ենթադրէ ժողովին կողմէն համա-

րատու ճիւղին վրայ , որ պարտաւորեալ կը գըտնի
հրաժարելու :

ՅՈՒ. 80. — Վարչութեան անդամոց հրաժարա-
կանը կամ ուղղակի ժողովին կը ալբան կամ Պատ-
րիսրք Սրբազնին , որ՝ եթէ ընդունի՝ կը հաղորդէ
՝ զանի ժողովին , որ կը հաստատէ՝ զայն ընդունե-
լութիւնը եւ նոր ընտրելեաց ցանկը կը խնդրէ (տես
յօդ 47) : — Ժողովին տրված հրաժարականը՝ եթէ
պատճառաբանեալ է Ժողովը իրաւասութեան դիւա-
նին եզրակայութեանը վրայ՝ ձեռամբարձով առանց
վէի՝ կամ կընդունի կամ Գործադիր իշխանութեան
կըյդէ ի տնօրէնութիւն :

ՅՈՒ. 81. — Ո՞ր եւ է պարագայի մէջ՝ երբ Ժո-
ղովին կողմէն անվստահութեան ցոյց կամ կաս-
կած նշմարէ , Վարչութեան այս կամ այն մասը
վչտ իրաւունք ունի վստահութեան քըւէ սլահան-
ելու :

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի մի-
է կը տեսնէ այդ քըւէին պէտքը : Այդ քըւէն
աջորդ նիստին կը մնայ , որոյ արդիւնքը Գործադիր
իշխանութեան չը դպչիր :

ՅՈՒ. 82. — Ո՞ր ժամանակ ըլլայ՝ երեսփոխան մը
լրնայ հարցադնդում ուղղել Վարչութեան ո՞ր եւ է
մասին կամ Պատրիարք Սրբազնին . բայց գրաւոր
պէտք է տայ իր այդ խնդրանքն Ատենապետին : —
Այդ խնդրանոք կը բացատրէ համառօտիւ հարցման
նիւթը եւ կըսէ որո՛ւ ուղղեալ ըլլալը . Ատենապետը
կ'ընթեռնու ՝ զանի ժողովին :

Երեսփոխանէ առ երեսփոխան հարցադնդում
արդիլեալ է :

ՅՕԴ. №3.— Վարչութեան անդամներէն անի ուրում անկ է պատասխանել՝ իր կարծիքը տալին ետքը, Ժողովը կը վճռէ՝ ձեռամբարձով առանց վէճի միթէ կամի լսել այդ հարցապնդումը, եւ կ'ուրոշէ օրը :

Իրաւունք է գոնփակ նստել եթէ խնդրէ հարցապնդեալ պաշտօնեայն :

Հարցապնդումը լմըննալէն եւ միջադէպը գոցիւլն եաքը, Ժողովը կը դառնայ իր օրակարգին :

ՅՕԴ. №4.— Պատրիարք Սրբազանին համար անվըստահութեան քըւէ չ'առաջարկվիր, եւ ոչ իսկ ի՞ք կրնայ վստահութեան քըւէ պահանջել, իր անկումը չը կրնար տեղի ունենալ այլ միայն ա'յն ճամբար որով հասած է յիշխանութիւն [յօդ. 13,50] :

Բայց կրնայ ամբաստանվիլ՝ երեսփոխանաց կոր մէն՝ Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար :

Երբոր կանոնաւոր [յօդ. 55] ամբաստանադիր մ'աւանդվի Մ. Դիւանին վրայ, Ատենապետը՝ զանի կը հաղորդէ Ժողովին եւ անոր կարծիքն առանց վէճի առնելէն ետքը կը յղէ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը :

Այս դիւանն իր տեղեկադրով կա'մ պարզապէս մերժման կ'եզրակացէ կա'մ նկատառման :

Տեղեկագրին եզրակացութեան վրայ Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ձեռամբարձով առանց վէճի, եւ ըստ այսմ՝ կա'մ կ'անցնի իր օրակարգին եթէ մերժումն արտասանէ, կա'մ ելք կուտայ ամբաստանութեան եթէ նկատառումն արտասանէ :

Այս ետքի պարագային մէջ՝ յատուեկ մասնաժողով մը կ'ընտրվի (յօդ. 7) ամբասանութիւնը քննելու համար :

Երբ այս քննիչ մասնաժողովին տեղեկագիրը՝ տպեալ եւ երեսփոխանաց ցրւեալ՝ աւանդվի Դիւանին, յետ ընթերցման եթէ ընթերցումն ըլլայ, Ատենապետը՝ Ժողովին կամքն առնելով առանց վէճի՝ կը յդէ՝ զայս տեղեկագիրը Ատենապետաց դիւանին, ի վերաքննութիւն :

Վերաքննեալ տեղեկագրին եկած օրը՝ Ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը, եւ կը դատէ զամբաստանութիւնը :

Այս դատական նիստը դանփակէ : Ատենապետը՝ զանի կը գումարէ երեսփոխանաց օրինական մեծամասնութեան ներկայութեամբը [յօդ. 50], եւ եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբը :

Քըւէն գաղտնի է, եւ ամբաստանողք քըւէն՝ ունին :

Եթէ ամբաստանութիւնն իրաւացի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջակէ անվստահութեան քըւէն, որ պարտաւոր իշխանութեան անկումը կ'ենթադրէ . որոյ արդեամբ եւ յանուն Ժողովին՝ Դիւանը նախագահ եպիսկոպոսին հետ կը խնդրէ Պատրիարք Սրբազնէն իր հրաժարականը, զոր կը պարտաւորի տալ :

Եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ վստահութեան քըւէն որ անպարտ իշխանութեան հաստատութիւնը կ'ամրապնդէ, եւ որոյ արդեամբ՝ զոր Դիւանը կը հաղորդէ Պատրիարք Սրբազնին, ամբաստանողք

կը պարտաւորին ներում խնդրել նորին Սրբազնութենէն դռնբաց նիստի մէջ :

Սոյն օրինակ կրնայ ամբաստանվիլ եւ Վարչութեան անձիւր ճիւղ, եւ Ժողովը սոյն ճամբով կը դիմէ իր դատավճորին :

Յօդ. Տ5. — Վարչութեան անդամը ալ կրնան ամբաստանել Պատրիարք Սրբազնը, բայց պէտք է նախ հրաժարին կամ դադրին պաշտօնէ . եւ չեն կը ընար ամբաստանել երբ արդէն նորիս Սրբազնութեան կողմէն վարչական փոփոխման մ'առաջարկութիւն աւանդեալ է Դիւանին :

Յօդ. Տ6. — Եթէ Պատրիարք Սրբազնը Վարչութեան մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ Ժողովին, պատճառաբանեալ կ'ընէ 'զայդ առաջարկութիւնը . եւ Ժողովը Խրաւասութեան դիւանին եզրակայութեանը վրայ՝ կ'ընդունի կամ կ'օրաձգէ 'զառաջարկութիւնը, ձեռամբարձով առանց վէճի :

Զօրաձգումը ուա բառերով կը պատճառաբանէ . « Ժողովը զՊատրիարք Սրբազնին ուշադրութիւնը վերստին հրաւիրելով առաջարկեալ փոփոխման վրայ՝ կը յապաղէ 'զիւր հաճութիւնը » :

Յօդ. Տ7. — Եթէ Պատրիարք Սրբազնը 'զիւր հրաժարականը տայ, պատճառաբանեալ պէտք է ըլլայ այդ հրաժարագիրը . Ժողովը՝ յետ ընթերցման Ատենապետաց դիւանին նախաքննութեանը կը յանձնէ հրաժարագիրը, եւ այս դիւանին եզրակայութեանը վրայ՝ պատճառները քննելով՝ կ'ընդունի կամ չընդունիր առաջարկեալ հրաժարումը :

Եթէ չ'ընդունի . պատճառաբանեալ կը հաղորդէ՝ 'զիւր որոշումը՝ Պատրիարք Սրբազանին , որում միայն կը մնայ որոշել իր ընելիքը :

ՅօԴ. 88.— Կեղրոնական Վարչութեան արտաքին յարաբերութիւններէն ծագած խնդիրները անուղղակի կու գան կ'ելնեն ժողովին ատեանը՝ Պատրիարք Սրբազանին միջնորդութեամբը :

Այս ճամբով եկած թուղթերը՝ կա՛մ հրամանագիր է Բ. Դոնէն , կա՛մ կոնդակ Վեհաշնորհ Կաթողիկոսէն , կա՛մ խնդրագիր Գաւառական ժողովներէն եւ Առաջնորդներէն , եւ կա՛մ աղերսագիր հասարակութեան կողմէն , Պատրիարք Սրբազանին ուղեալ . որ ատոնց մէջէն ժողովին ներկայելիները կը հաղորդէ անոր՝ կցելով միանգամայն Վարչութեան կարծիքը նոյն խնդրին վրայ եւ պարտ ու պատշաճն իմացնելով :

Ժողովն՝ ըստ պատշաճին՝ կա՛մ Վարչութեան կը յղէ ի տնօրինութիւն , կա՛մ իր դիւանաց նախաքննութենէն կ'անցնէ խնդիրը , կա՛մ մասնաժողովէ մը եւ կամ Ատենապետաց դիւանէն , եւ ասոնց տեղեկագրին վրայ կը վիճէ , կ'որոշէ իր պատասխանը եւ կը հաղորդէ իր նախագահին առ ի տալ որում անկ է :

ՅօԴ. 89.— Հասարակութեան կողմէն աղգային ժողովին մատուցուելու հանրագիր , աղերսագիր , ըստորագրեալ ըլլալու է . ըստօրագրողաց երկիրը . արհեստն ու բնակարանը նշանակեալ , կամ գոնէ չորսինը եթէ շատւոր են :

Ըստօրագրութիւնք վաւերացեալ ըլլալու են տեղին Թաղական խորհուրդէն :

Եթէ այդ վաւերացումը զլացեալ է , այդ զլացումը նշանակելու են ըստորագրօղք աղերսագրին աւարտը :

Հանրագիր թէ աղերսագրիր նախագահ Սրբազանին պէտք է ուղիղ եւ անոր տրվի կամ պատրիարքարանի դիւանատան՝ մէկ կամ քանի մ՝անձանց ձեռօք :

Ժողովարանին բակը խոնեալ բազմութեամբ բերված աղերսագրիրը ոչ նահագահը կրնայ ընդունել ոչ Ատենապետը :

Երեսփոխանի մը արդիվեալ է միջնորդ կանդնիլ բազմութեան եւ ժողովին մէջ տեղ . պարագային ծանրութեան համեմատ ենթակայ կը լլայ 102 յօդուածին տնօրինած պատիմներէն մէկուն :

ՅՕԴ. — Աղերսագիրներն իրենց եկած կարգովը կը տօմարագրէ Պատրիարքարանի դիւանապետը աղերսագրոց տօմարագրքին մէջ , նշանակելով աղերսագրին կարգին թիւը , ըստորագրօղին երկիրը , արհեստն ու բնակարանը , նոյնպէս եւ խիստ համառօտ կերպով աղերսին առարկան :

Տօմարագրեալ աղերսագիր նախագահին կողմէն դիւանապետին ձեռօք կ'աւանդվի Մ. Դիւանին , եւ Ատենապետը՝ ժողովին համառօտ մը ծանսւցնելով նիւթը՝ կը յղէ Յարաբերութեանց դիւանին , ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի :

Եթէ նոյն խնդրին վերաբերեալ խնդրով մ՝ը բազած է յատուկ մասնաժողով մը կամ ուրիշ դիւան մը , ուղղակի հոն կը յղէ : Զայս յղումը Յարաբերութեանց դիւանն ալ կրնայ ընել :

Ո՞ր եւ է երեսիոխան կրնայ լիովին ծանօթութիւն առնուլ աղերսագիրներէն , անոնց քննութեանն զբաղօղ դիւանին դիմելով :

Յ0Դ. — Ամեն մէկ աղերսագիր՝ տեղեկագրի մը եւ որոշման մը նիւթ է քննիչ դիւանին մէջ :

Տրված որոշումն՝ իբրեւ պատասխան՝ իմաց կը տրվի աղերսագրօղին , աղերսագրին կարգին թըւահամարովը , որոյ առջեւ նշանակեալ է այդ որոշումը :

Քննիչ դիւանը կամ մասնաժողովը ժողովին առեանը կը բերէ ա'յն աղերսագիրները 'զորս Վարչութեան յղել կ'եղրակայէ , եւ զանոնք որ օդտակար կը դատէ ժողովին քննութեանն ենթարկել :

Առաջնութիւն կամ ստիպօղութիւն կրնայ խընդըրվիլ աղերսագրի մը քննութեան համար . Ժողովը կ'որոշէ սոյն պարագային մէջ՝ ձեռամբարձով առանց վէճի :

Երեք ամսի մէջ գոնէ՝ Վարչութիւնը կը ծանուցնէ աղգային օրագրի միջոցով ինչ ելք որ տուած ժողովէն իրեն յղեալ աղերսագրոց :

Թ. ԳԼՈՒԽ

Ներքին եւ արտաքին բարեկարգութիւնն
Ազգային ժողովին.

Յ0Դ. — Ժողովին բարեկարգութիւնը՝ 'յանուն ժողովին՝ Նախագահ Սրբազանը կը հոգայ , անձամբ կամ իւր փոխանորդին ձեռօք :

Փոխանորդ Հօր կը վերաբերի նաեւ ժողովարանին նիւթական պիտոյից հոգը .

Յօդ. Գ3. — Ո՞չ ոք օտար՝ ո՞չ մէկ պատճառանոք՝ չը կրնար մտնել երեսփոխանաց բազմած շըրջապատին մէջ :

Յօդ. Գ4. — Ժողովուրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարված է ատենագրութեանց հըրատարակմամբը, որ՝ իբրեւ արձագանք ժողովին՝ համօրէն ազգին լսօղութեանը կը հասնի : Ներկայութեամբ սահմանեալ ունկնդրութեան թոյլտուութիւնը չնորհ մըն է ժողովին կողմէն . զոր նախադանը կամ Ատենապետը կը տնօրինեն :

Վերնատունը՝ տիկնայց յատկացեալ է :

Դասը՝ եկնդեցական ունկնդրաց, գաւառական եւ թաղական ժողովականաց ու Խորհրդականաց, նախկին երեսփոխանաց, ազգային լրագրապետաց եւ պատուաւոր օտարազգեաց յատկացեալ է, զորոնք բարապանք կ'ընդունին ու կը տեղաւորեն :

Նիստին բոլոր տեւողութեան ատեն՝ ունկնդիրք լուռ կենալու են եւ նստած :

Հաւանութեան կամ տժգոհութեան ձայն բարձրացնօղը իսկոյն դուրս կը հանվի ունկնդրութեան տեղէն՝ բարեկարգութեան պահապան բարապանաց ձեռօք, հրամանաւ նախագահին կամ Ատենապետին :

Յօդ. Գ5. — Եթէ ժողովը աղմըկայոյզ ըլլայ, եւ Ատենապետը կամ նախագահը չը կարենան հանդարտութիւնը վերահաստատել, կ'ազդարարեն թէ նիստը դադրեցնելու պիտի պարտաւորին :

Երկրորդ ապարդիւն ազդէն ետքը՝ նիստը կը վերնայ կէս ժամի չափ : — Կէս ժամին՝ նիստ ու

վիճաբանութիւն դարձեալ կը շարունակվին :
Եթէ աղմուկը նորէն սկըսի , Ատենապետը՝ Ժողովին իմաց տալէն ետքը՝ կրնայ վիճաբանութիւնը փակեալ յայտարարել , եւ անմիջապէս քըւէարկութեան ձեռնարկել , եթէ տեղի կայ :

Եթէ աղմուկը մէյ մ'ալ սկըսի ու քուէարկութիւնը խափանէ , կամ Ժողովին մէջ բռնութեան դիմողներ ըլլան , իսկոյն կը վերնայ նիստը :

ՅօԴ. Գ6.— Պատրիարք Արքազանին հոգն է հըսկել Ազգային Ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեան :

Առ այս պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու , հարկաւոր գատած հրամանները կու տայ , եւ ըստ հարկին՝ պահապան զօրութիւն կը խնդրէ սստիկանութենէն , իր հրամանին տակ գործելու :

Պատրիարքական իշխանութեան սահմանը՝ թէ Ազգին եւ թէ Տէրութեան առջեւ՝ իր ուխտին ու պատժամիսանատուութեան սահմանն է :

Ճ. ԳԼՈՒԽ

Պատժական կանոնք

ՅօԴ. Գ7.— Ազգային Ժողովին կանոնազանց անդամոց տնօրինվելու բարեկարգական պատիժները՝ չորս աստիճան՝ սայոնք են :

Հ 1. Ի կարգ կոչում .

Հ 2. Ատենապրութեամբ ի կարգ կոչում .

Հ 3. Ցանդիմանութիւն .

Հ 4. Պարսաւանօք յանդիմանութիւն :

Մեղմ պատիժները Ա.տենապետը կը տնօրինէ .

Խիստ պատիժները Ժողովը կ'արտասանէ :

Յ0Դ. ԳՑ. — Ի կարգ կը կոչվի այն ատենաբանն որ կարգէն խոտորի , այն անդամն որ 28 յօդուածին պատուիրանքը չը յարգելով կամ ո՛ր եւ է կերպով բարեկարգութիւնը խանդարէ :

Յ0Դ. ԳՋ. — Ա.տենագրութեամբ ի կարգ կը կոչվի այն անդամն որ մի եւ նոյն նիստի մէջ երկու անդամ , կամ երկու յաջորդ նիստերու մէջ ի կարգ կոչվեցաւ :

Յ0Դ. 100. — Ա.տենապետն ինքնին անկախ հեղինակութիւն ունի ի կարգ կոչելու :

Խօսքը կը չնորհվի այն ատենաբանին որ՝ ի կարգ կոչեալ՝ կը հպատակի Ա.տենապետին հեղինակութեանն ու կը խնդրէ՝ զինքն արդարացնել :

Անի որ՝ խօսելու արտօնութիւնը չ'առած՝ զինքն ի կարգ կոչել տուաւ , խօսք չունի զինքն արդարացնելու համար այլ միայն ատեանին վերջերը , եթէ Ա.տենապետը չը հաճի :

Եթէ Ա.տենապետը ետ չ'առաւ ի կարգ կոչումը , ատենադպիրք զանի կը նշանակեն ատենագրութեան մէջ :

Յ0Դ. 101. — Երբոր ատենաբան մը մի եւ նոյն նիստի մէջ երկու անդամ ի կարգ կոչվի , Ժողովը կը նայ՝ Ա.տենապետին առաջարկութեան վրայ՝ արդիլել՝ զանի խօսքէ այնուհետեւ այն նիստին մէջ :

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի :

Յ0Դ. 102. Յանդիմանութիւն կ'արտասանվի այն անդամին դէմ :

1. Որ ատենագրութեամբ ի կարգ կոչումէն ետքը՝ չը դառնար ի կարգ եւ ի պարտականութիւն .

2. Որ մի եւ նոյն նիստի մէջ երեք անգամ կամ յաջորդապէս երեք նիստի մէջ ի կարգ կոչման պատժին արժանանայ .

3. Որ ժողովին մէջ աղմկայոյզ տեսարան մը յարուցնելու նախաձեռնէ , կամ օրէնսդրական աշխատանքէ հաւաքապէս ձեռնպահութիւն թելադրէ .

4. Որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մասին դէմ նախատինք կամ գրգռիչ սպառնալիք ու դդէ :

ՅՈՒ. 103. — Պարսաւանօք յանդիմանութիւն կ'արտասահմի այն անդամին դէմ .

1. Որ պարզ յանդիմանութեան դիմադարձութիւնընէ :

Որ բռնութեանց դիմէ կամ ունկնդրաց յարձակման ձայնատու ըլլայ .

3. Որ հայհոյէ կամ ընկերին ձեռք վերցնէ .

4. Որ ըզծողովն անարգէ , կամ անոր մէկ մասը, կամ Ատենապետը :

ՅՈՒ. 104. — Պարսաւանօք յանդիմանութիւնը հարկ կը դնէ յանցաւոր երեսփոխանին՝ իսկոյն ատեանը թողուլ դուրս ելնել եւ զգուշանալ երեւիլէ մէյ մ'ալ նոյն նիստին մէջ :

Եթէ չ'ելնէ , նախագահը հրաման կ'ընէ . եթէ այս հրամանին անհնազանդութիւն ըլլայ , նիստը կը վերնայ , եւ յանցաւորին մեկնիլէն ետքը կրնայ դարձեալ չարունակվիլ . բայց անհնազանդ յանձաւորը յաջորդ նիստին մէջ խօսելու իրաւունքը կը կորումնէ :

ՅՕԴ. — Յանդիմանութիւնները՝ թէ պարզ եւ թէ պարսաւանօք՝ Ժողով՝ կ'արտասամնէ ձեռամբարձով առանց վէճի, Ատենապետին՝ յանուն կանոնագրութեան՝ առաջարկութեանը վրայ, եւ նախագահը կը գործադրէ :

Երեսփոխանը՝ որու դէմ առաջարկվի այս բարեկարգական պատիժներէն մէ կը կամ միւսը, միշտ իրաւունք ունի իր արդարացման համար խօսելու կամ՝ յանուն իւր խօսեցնելու իր պաշտօնակցաց մէ կը

Ժողովին արտասանած պատիժները ատենագրութեանց մէջ կ'արձանագրվին, իսկ այս վճիռներուն հետել յանդգնօղին անունը՝ եթէ ըլլայ այդ աստիճան կանոնագանց՝ հասարակաց թերթերով ակը տարածայնի, ի հրապարակ տալով ատենագրութեան այն քաղուածը ուր պատիժը յիշեալ է :

ՅՕԵ. — Կ'ընկնի երեսփոխանութենին այն անդամն որ Ժողովարանին մէջը կամ չուրջը ոմիր մը գործէ, կամ իր օրէնսդրական պաշտօնին տեւաման ատեն պատփական ատեանի մը կողմէն դատապարտութիւն մը կրէ, որ զրկէ զինքը՝ իրեւբարոյապէս անբաւական՝ ընտրելութեան իրաւունքն, ըստ Սահմանադրութեան :

Պաշտօնանկութիւնը Ժողովին կ'արտասամնի՝ յետ օրինաւոր ապացուցման :

պարսկական մատուցութեան համար է առաջ բացակայութիւն
առաջ բացակայութեան մատուցութեան համար է առաջ բացակայութիւն
առաջ բացակայութեան համար է առաջ բացակայութիւն

Բացակայութիւն

ՅօԴ. 102. — Բացակայութեան հզօր եւ բանաւոր պատճառներ են՝

1. Ճամբարդութիւն.
2. Հիւանդութիւն.
3. Հրդեհ թաղին մէջ.
4. Ծանր հիւանդ տան մէջ :

ՅօԴ. 103. — Նախագահ Սրբազնին ներկայութիւնը միշտ կարեւոր է ժողովին չուքն ու պատկառանքն աւելցնելու համար, եւ երբեմն անհրաժեշտ ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեանը համար :

Երբոր բանաւոր պատճառով կամ ազգային կարեւոր ու ստիպով գործով մը զբաղեալ՝ ստիպվի բացակայութեան, իր տեղ առօրեայ նախագահ մը կը դուցնէ :

ՅօԴ. 104. — Մայր դիւանին անդամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատեանին բացման ձիշտորոշեալ ժամուն, մանաւանդ Ատենապետինն ու խմբագիր ատենագոլրինը անհրաժեշտ է, մէկը ատեանը բանալու համար, միւսը ատենագրութեան վրայ դիտօղութեանց պատասխանելու համար:

Երբոր Ատենապետը հզօր պատճառով մը ստիպվի բացակայութեան, պարտաւոր է բաւական ժամանակ տուշի իմաց տալ երկու դերատենալու-

տաց միանդամայն, զի եթէ մէկն ալ նմանապէս անյաղթելի ուժի մը տակ գտնվի՝ կարենայ, միւսին իմաց տալու միջոց ունենալ :

Նմանօրինակ կը պարտին իրարու իմաց տալ եւ ատենադսլիք :

Ժողովին պատուածանութեանը դպչելի անտեղութիւն է՝ զիւանին անդամոց բացակայութեան երեսէն՝ առօրեայ զիւանով ատեան բանալու հարցկին տակ գանվիլ (յօդ. 2) :

ՅՕԴ. 110.— Հրաժարեալ կը համարվի ա'յն երեսփոխանը .

1. Որ՝ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդնիստերու բացակայ մնալով, երրորդին անձամբ չը պատասխանէ նախագահական յատուկ կոչմանը. ասի՝ իր յանձնառած պաշտօնին անհոգութիւն ըրաւ երեք անդամ .

2. Որ՝ առանց բանաւոր պատճառ յայտնած ըլլալու՝ ատենական շրջանի մը երեք անբաւական նիստերու մէջ անուանական կոչման չը պատասխանէ . ասի՝ Ազգին գործը ետ մնալու պատճառ եղաւ երեք անդամ :

Այս դասի տնդամները՝ եռապատիկ պարտազանց՝ 102 յօդուածին խստութեանը կը հանդիպին, որ բացակայութեան վերադիրով ա'յսքան կը ծանրան այեւ կ'ըլլայ ՀԵՇԽԱԿԱՆ բացակայութեան, 'զոր ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի՝ Ա.տենապետին՝ յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ (¹) :

(¹) Հրահանժ. — Պիւանը պատժատետը մ'ոնի տօմարածեւ, ուրոյ մէջ անձիւը պատիմ իր երկու էջն ունի դէմէ դէմ. հոն կը

Պարտազանցութետմբ հրաժարեալ համարելոց անունները՝ ատենագրութեանց մէջ նշանակվելէն զատ՝ հասարակաց թերթերն ալ կը տանին ընտրողաց ականջը :

ՅՕԴ. 111. — Եթէ կանոնին հրաժարցուցած թէ ինքնին հրաժարօղաց եւ թէ վախճանեալ երեսփոխանաց աեղ նոր ընտրութիւնները ատենական տարւոյն վերջը կ'ըլլան ընդհանուր ընտրութեանց ատեն :

Սակայն եթէ Ժողովէ պակսող անդամոց թիւը օրինական թիւին քառորդն անցնելով՝ իսկական թիւին ամբողջութիւնը խորել սպառնայ (յօդ. 49).

Ժողովը կրնայ՝ երբ որ ըլլայ՝ պատահական ընտրութիւն հրամայել, Նախազահ Սրբազնին կամ Դիւանին առաջարկութեանը վրայ :


Եթէ Դիւանին մէջ պատահի հրաժարումը, անմիջապէս յաջորդ նիստին կ'ըլլայ ընտրութիւնը (տես յօդ. 5).

ՎԵՐՃԻՆ ՅՕԴ. — Եթէ ատենական շրջանի մը մէջ երկու անգամ միայն՝ յաջորդապէս թէ ընդմիջապէս՝ նիստը բոլորովին անբաւական մնալով տեղի չ'ունենայ կամ վերնայ, սոսկ որոշող մասին բա-

նշանակին ատենադպիրք անձիւր նիստին մէջ տեղի ունեցած պատիժը, նոյնպէս և բացակացութիւնը : Ամեն նիստին վերջերը, նոյն տետրը աչքէ անցնելով՝ եթէ կայ պարտազանցութեան աւտիճանք հասած անուն ցանկը կուտան Ատենապիտին, որ զանի է լը կարդաց և Ժողովը կ'արտասանէ անոնց հրաժարեալ համարումը :

ցակայութեան երեսէն . եւ երրորդին՝ թէ երես/ո-
խանք նախագահական յատուկ կոչնագրին խուլ
միան ու նիստը դարձեալ անբաւական թողուն
(յօդ. 52), բացակաւ մեծամասնութիւնը՝ իրեւ
եռապատիկ պարտազանց՝ լստ կանոնի հրաժարեալ
կը համարվի (յօդ. 110) :

Եթէ այդ անակնկալ այլ ոչ անկարելի գէղը տե-
ղի ունենայ , Նախագահ Արբաղանը անհրաժեշտ
հարկին մէջ կը զանվի ստիպօղական ատեան բա-
նալու որ եւ է թըւով ներկայ անգամոց , որք կը
հաստատեն մեծա համնութեան բացակայութիւնը ,
կ'արտասանեն 110 յօդուածին տնօրինած արժանա-
հաս վճիռը , եւ զ'ատենազրութիւնը կ'ուստորագրեն :
Հետեւեալ օրը՝ սովորողական ատեանին վճիռն
հրատարակելով , միանգաւայն եւ բացակայից տեղ
նոր ընտրութեանց հրահանգները տալով ընտրով ժո-
ղովոց , Պատրիարք Արքաղանը՝ Երեւ աւանդապահ
ազգային գործադիր իշխանութեան՝ անմիջապէս կը
հոգայ զ'Ազգային Ժողովին ամբողջացումը :



ԲՈՅԵՐՈՒՄ

անողը է Ա. Խ. ԲՈՅԵՐՈՒՄ
 շահ մզգաբարչի քառական առաջնաբարձր պատճեն
 շահութիւն մայլա անուն եր հայութ առ առան
 անդրի ցաւ Ա. ամասնա հօն առաջազ ու Ա. պատճեն
ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՅ

առ Պատ բաժանման բաղից ու գաւառաց
 ու շինագուման

ՅԱՆԿ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ԱՊԱԲԵՒԻ ԿԱՐԳՈՎ

— 118 —

卷之三

၁၃၁၂ ခုနှစ်တွင် မင်္ဂလာဒေသ ပြည် အနေဖြင့် မင်္ဂလာဒေသ ပြည် အနေဖြင့်

(第二十一章)

ՅԱԻԵԼԵԱԼ

Ե Ի

ԲԱՐԵՓՈԽԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ

(Ը. նիստ 1876 ամի , երես 138)

Ծանրակշիռ խնդրոց լուծման ժամանակ թեր ու դէմքուէ տուողաց անուններն ատենագրութեանց մէջ յայտնապէս պիտի նշանակուին :

(ԻԱ. նիստ 1878 ամի , երես 496)

Վարչութիւնն փոխանակ վարչական գործոց տեղեկագրի մը , որ մինչեւ ցարդ համարատուութեան համար գործածուած ձեւն էր , պարտի՝ հարկ տեսած ատեն կամ գէթ Ազգային Ժողովոյ նոր շրջանի բացման միջոցին՝ հրատարակել Սպէտակ բետք անունով , պաշտօնական գրութեանց տեսր մը , այն գրութեանց միայն որ կրնան ի լոյս գալ անվաս :

Երեափոխանք միշտ ազատ են անցեալ եղելութեանց համար պաշտօնական դիւաններուն դիմել եւ ճշմարտութեան վերահասու ըլլալու համար պէտք եղած հետազօտութիւնն ընել ըստ պատշաճից օրինաց , որով առիթ կունենան՝ եթէ կամք ընեն՝

հարցում կամ հարցալնդում ուղղել որ եւ է զործոյ վրայ եւ այս կերպով ալ համարառութիւն կատարել:

(Դ. նիստ 1879 ամի , երես 114-120)

ՅՕԴ. 1. — Ազգ. ժողովոյ տարեկան շրջանի բազման նախադահական ճառին՝ որ գրաւ որ կերպով պէտք է ըլլայ, Ժողովը կը պատասխանէ ուղերձով մը, զոր Ատենապետաց դիւանը կը ծրագրէ եւ Ժողովու վիճաբանութեամբ կը խմբագրէ Խոր երրորդ կամ չորրորդ նատին մէջ, ուր ՍՊատրիարքը փոխանորդով մոր կը նախադահակէ Ժողովին: Սոյն ուղերձը Ապար Դիւանի քրջոյաւ կներկայացուի ՍՊատրիարքին:

ՅՕԴ. 2. — Խրաքանչիւր ատեանի սկիզբն ատեանական գործողութեանց համար առ առաւելն մէկ ժամ կը զօնուի, իլրաման ժամուն՝ անկատար միացած զործողութիւնք յաջորդ նստին կը ձգուին, բացի Ժողովով ստիպողականութիւն տրուած խընդիրներէն՝ որ առ ժամայն կը լուծուին:

ՅՕԴ. 3. — Դիւաններուն կամ մասնաւոր Յանձն նախումբերու քննութեան յանձնուած անձնիւր խնդրոյ համար պայմանաժամ կորոշուի տեղեկագրութեան, զոր Ժողովը Ատենապետին առաջարկութեան վրայ ձեռամբարձով կը սահմանէ առանց վիճաբանութեան, եւ բոլոր յանձնարարեալ խնդրոց ցուցակը Ժողովարանին մէջ յարաժամ ի տես ամենից կարուի Ատենապարին ինամծքն:

ՅՕԴ. 4. — Որ եւ է Դիւան կամ Յանձնախումբ պարտաւոր է իր քննութեան յանձնուած խնդրոյն տեղեկագիրը պարմանեալ ժամանակին բերել եւ կամ չկրնալ բերելուն պատճառը զրաւոր բացատրել Ժողովին։ Պայմանաժամկետ տեղեկագիր կամ բացասրութիւն չբերող զիւան կամ յանձնախումբ ազդարարութիւն կընդունի Դիւանէն յատենի Ժողովոյ, եւ երկրորդ անգամ սայմանաժամ որոշուելով. եթէ դարձեալ պարտազանց գտնուի, դըժգոհութեան քուէ կընդունի Ժողովէն եւ տեղն ուրիշ մը կընտրուի։

ՅՕԴ. 5 ա. — Խրաքանչիւր երեսփոխան իրաւունք ունի երբ որ ուղէ որ եւ է զործի կամ խընդրոյ մը վրայ հարցումն կամ հարցալնդումն ընել Ազգ. Վարչութեան, հարցումը տեղեկութիւն ստանալու կամ եղելութիւն մ'ըստու գելու համար կըլլայ եւ պատասխանը պարզ տեղեկութիւն է. Խսկ հարցալնդումը քննադատական ձգտում ունի եւ պատասխանը մինչեւ տարուան մը համարատուութիւն է։

Բ. — Հարցում կամ հարցալնդում զրաւոր կաւանդուի Մայր Դիւանին, որ ատենական դործողութեանց կարգը կը հազորդէ զան Փողովին եւ կը յղէ առ որ ուղղեալն է ի պատասխանատուութիւն, որ պարտաւոր է հետեւեալ նստին կարծիք յայտնել, եթէ հարցման կամ հարցալնդման հեղինակն ստիւպողութիւն չը խնդրէ եւ կամ ծողովն չընդունի ստիւպողութիւն։ Խսկ հակառակ պարագայի մէջ, Վարչութիւնը պարտաւոր է նոյն նստին վեշտեց յայտ-

նել կարծիքն, ի պատասխանի հարցման կամ հարցապնդման :

Գ.— Վարչութեան կարծիքը կամ ուղղակի պատասխանէ հարցման կամ հարցապնդման նիւթ եղող խնդրոյն, եւ կամ առժամանակեայ կատարելապէս պատասխանելն անկարելի կամ անպատշաճ ըլլալուն յայտարարութիւնը : Սոյն վերջին պարտագայի մէջ Վարչութիւնը պարտաւոր է պայմանաժամ ցոյց տալ եւ պատրաստ գտնուիլ նոյն ժամանակ պատասխանելու եթէ հարցումն կամ հարցապնդումը կրկնուի :

Դ.— Վարչութեան կարծիքը կամ պատասխանը լսուելէն ետքը՝ Ատենապետն զհարցման խնդիրը կը գոցէ իբր միջաղէպ, եւ կանցնի օրուան կարգին : Խսկ եթէ հարցապնդում կը կատարուի, Վարչութեան հաճութեամբ օրը կառաջարկի վիճաբանութեան, եւ ժողովը զայն կը սահմանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան :

Ե. Յրոշեալ օրը հարցապնդման վիճաբանութիւնը տեղի կունենայ, հարցապնդող եւ հարցապնդեալ՝ որքան անգամ որ սկսայ, իսկ ուրիշ երեսփոխանք ըստ կանոնի մինչեւ երկու անգամ խօսելէն ետքը, վիճաբանութիւնը կը փակուի եւ պատճառաբանեալ օրակարգի մը քուէ արկութեամբ վերջ կը տրուի հարցապնդման խնդրոյն, եթէ ժողովը պատշաճագոյն չը դատէ պարզ եւ անխառն օրակարգն քուէ արկելով փակել միջաղէպը :

ՅՈՒ. Զ.՝ Ազգ. Ժողովը չորս անդամով Ելեւմտից Յանձնախումբ մը կ'ընտրէ իւր մէջէն, որ ազգային

պիւտճէին մէջ Աղգ. Ժողովոյ համար սահմանուած գումարը Վարչութենէն ընդունելով՝ կը հոգայ Ժողովին տապագրական, կահ կարասեաց եւ ուրիշ ամեն կարգի ծախքերը, եւ տարեգլխին հաշիւը կը ներկայէ Աղգալին Ժողովին:

Յ0Դ. 1.— Աղգ. Ժողովին կանոնական նիստերուն օրն ու տեղին՝ պատշաճ տեսած ատեն՝ Ա. Նախագահը Մայր Դիւանին հետ կանխաւ խորհրդակցելով կ'որոշէ հարկ եղած փոփոխութիւնը:

(ԺԱ. ԵԽ. ՃԲ. նիստ 1880 ամի, երես 312 եւ 334)

Յ0Դ. 1.— Ժողովատեղին (Գումգափույէն) փոխադրեալ է ի Ղալաթիա:

Յ0Դ. 2.— Առանց օրինաւոր պատճառի երեք անգամ բացակայ եղող երեսփոխանին անունը Դիւանը կը ծանուցանէ Ժողովին, եւ կոչնագրին մէջ ալ յատկապէս կը յիշեցնէ իրեն՝ որ երրորդ բացակայութիւն ունեցած է արդէն, եւ եթէ չորրորդ անգամ ալ բացակայ մնայ, ըստ օրինի հրաժարեալ պիտի համարուի:

(ՃԹ. նիստ 1880 ամի, երես 475 եւ 477)

Յ0Դ. 1.— Ժողովոյ գումարման յատկացեալ Ուրսաթ օրերն Հինգշաբթիի փոխուած է:

Յ0Դ. 2.— Փոխանակ կէս օրէն յեաոյ գումար-

ուելու՝ փորձի համար կէս օրէն Յ ժամ յառաջ պիտի գումարի ժողովը :

ՅՈՒ. Յ. — Բացակայութիւն եւ հրաժարում նըշանակող գրութիւնք ատեանի բացումէն մինչեւ կէս ժամ յառաջ պիտի աւանդուին Ատենապետին :

ՅՈՒ. Ա. — Առաջարկութիւն, հարցում, հարցապնդում խնդրագիր, տեղեկագիր, եւն. նշանակող գրութիւնք՝ ատեանին բացումէն մինչեւ մէկ ժամ յառաջ պիտի աւանդուին Ատենապետին :

